Ամբողջ չորրորդ դարում քրիստոնէութիւնը դեռ լիովին ժողովրդական կրօն չէր։ Հին հայկական կրօնը դեռ գոյութիւն էր պահպանում երկրի համարեա բոլոր կողմերում և Հայաստանի քրիստոնեայ կառավարութիւնը, հոգևորականների ղեկավարու-



թեամբ, ստիպւած էր լինում նաև բռնի միջոցների, հալածանքների դիմել՝ նոր կրօնը հաստատ պահելու համար։

Եւ հասկանալի է այս դրութիւնը։ Ժողովուրդը իր մայրենի լեզւով գիրք չունէր։ Եկեղեցիներում, դպրոցներում տիրում էին ասորերէնը, յունարէնը։ Դաստիարակութեան գործը գտնւում էր օտար ուսուցիչների ձեռքում։ Հայը նախ պիտի սովորէր օտար լեզուները, որպէս զի կարողանար հասկանալ և չիմացողներին թարգմանել նոր կրօնի սրբազան գրքերը։ Միայն անհատներ կարող էին այդ շատ դժւար գործը կատարել։ Լայն ժողովրդական գիտակցութիւն չէր կարող ստեղծւել։

Նոյն չորրորդ դարում Հայաստանի քաղաքական դրութիւնը

ցոյց էր տալիս կործանման բոլոր նշանները։ Վաղուց այդ երկիրը կռուածաղիկ էր դարձել երկու մեծ, աշխարհակալ պետութիւնների — Պարսկաստանի և Հռոմի մէջ։ Հայաստանի տէր դառնալը երկու մրցողների համար քաղաքական մեծ անհրաժեշտութիւն էր. Քրիստոնէութեան մուտքը Հայաստան՝ թւում էր թէ գերազանցութիւն էր տալիս մրցակիցներից մէկին—հռոմէական կայսրութեան արևելեան բաժնին կամ Բիւզանդիային, որ նոյնպէս քրիստոնէութիւն էր ընդունել։ Թւում էր թէ Բիւզանդիան, անհագին բարոյական և կուլտուրական ազդեցութիւն ձեռք բերելով իր հաւատակից Հայաստանում, կը պահպանէ նրա քաղաքական ամբողջութիւնը, իբրև լաւագոյն միջոց Պարսկաստանի



արշաւանքների դէմ իր սահմանները պաշտպանելու։

Բայց բիւզանդական կայսրների քաղաքականութիւնը այդպէս չըմբռնեց դրութիւնն ու անհրաժեշտութիւնը։ Փոխանակ պաշտպան ու հովանաւոր հանդիսանալու՝ Բիւզանդիան էր որ համաձայնութիւն կայացրեց Պարսկաստանի հետ և Հայաստանը բաժանեց այդ երկու պետութիւնների մէջ (389 թւականին)։

Դա մահացու հարուած էր հայ անկախութեան, ազգային ամբողջութեան համար, որ մարմնանում էր համազգային թագաւորական իշխանութեան մէջ։ Բաժանուած, հետևաբար և ջլատուած, թուլացած երկիրը այլ ևս չէր կարող իր գոյութիւնը պահպանել։ Նրա երկու մասերը պիտի կլանուէին այն պետութիւն-

ների կողմից, որոց սեփականութիւն էին կազմում։

Եւ այսպէս, չորրորդ դարի վերջերում արդէն զգացւում էր մեծ աղէտի մօտալուտ վտանգը։ Հոգեվարքի մէջ էր հայ պետութիւնը։ Նա կարող էր անյայտանալ ամեն ժամ, ասպարէզի վրայ թողնելով մի ժողովուրդ, որ իր հին, ազգային կրօնից հեռացել էր, առանց նորը ամբողջովին ընդգրկելու։ Նա յենարաններ չունէր իր ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։ Հայաստանի պարսկական մասում տիրապետում էր ասորի հոգեւորականը, յունականում յոյն հոգեւորականը։ Վաղը, երբ կը ջնջւեն քաղաքական անկախութեան վերջին նշաններն էլ, հայութեան մի մասը՝ ասորական կուլտուրայի մէջ կը ձուլուի, միւսը՝



յունականի մէջ։ Վտանգի ենթարկւածը միայն հայի քաղաքական ինքնուրոյնութիւնը չէր, այլ և նրա ազգային ինքնուրոյնութեան ամենագլխաւոր յենակէտը—լեզուն։

Այս վտանգը զգացւում էր պարզ կերպով։ Անկարող լինելով քաղաքական անկախութիւնը պահպանել, հայը պիտի կարողութիւն ցոյց տար գոնէ իր ազգային ինքնուրոյնութիւնը վտանգից ազատելու համար։ Դըրւած էր իբրև ազգութիւն ապրելու կամ ոչնչանալու հարցն էլ.

Եւ հայ ժողովուրդը այդ ահագին վտանգի դիմաց դուրս բերեց իր ամբողջ մտաւոր, հոգեկան կարողութիւնը, որ պիտի արտայայտւէր և կարող էր արտայայտւել միմիայն սեփական

մայրենի գրականութիւն ստեղծելու մէջ։

Այդ մեծ անհրաժեշտութեան, ժամանակի այդ հրամայողական պահանջի իրագործման գործիք դարձաւ մի հանճարեղ հայ։

—

## Ս. ՄԵՍՐՈՊ

Հայաստանի պարսկական մասում 396—399 թւականներին թագաւորում էր Խոսրով երրորդը։ Նրա արքունիքում ծառայում էր մի գիւղացի հայ, Տարօն գաւառի Հացեկաց գիւղից, Մաշտոց կամ Մեսրոպ անունով։ Նա զինւոր էր, բայց թողեց զինւորական պաշտօնը և ստացաւ թագաւորական գրագրի պաշտօն արքունիքում։



Գրագիրը հին Արևելքում պետական շատ կարևոր և ազդեցիկ մի պաշտօնեայ էր։ Եւ եթէ Տարօնի գիւղացին հասաւ այդ դիրքին, դրա պատճառն այն էր որ նա ստացել էր լաւ կրթութիւն, սովորել էր Հայաստանում տիրապետող երեք լեզուներն էլ—յունարէն, ասորերէն և պարսկերէն։

Արքունի դիւանադպիրը սակայն, չը հրապուրուեց իշխանութեան, պալատական կեանքի փայլով։ Միևնոյն ժամանակները կաթողիկոսական աթոռն էր բարձրացել Սահակը, նոյնպէս լաւ կրթւած մի հոգևորական, Ներսէս Մեծի որդին, Գրիգոր Լուսաւորչի տոհմից։ Իր նախնիների նման, Սահակն էլ եռանդոտ գործունէութիւն էր ցոյց տալիս եկեղեցու բարեկարգու-

թեան համար, աշխատելով որ քրիստոնէութիւնը հաստատուի հայ ժողովրդի գիտակցութեան մէջ։ Այդ նպատակով էր որ նա հիմնեց անապատական կրօնաւորների մի կարգ, որի գլուխը հանդիսացաւ ինքը և որի գլխաւոր նպատակն էր, ինչպէս երեւում է, քարոզչութիւն անել ժողովրդի մէջ։

Մեսրոպը թողնում է իր արքունի պաշտօնը, դառնում է կրօնաւոր և մտնում է այդ քարոզիչ անապատականների ընկերութեան մէջ։ Ժողովրդին քարոզելու մէջ էլ նա ցոյց է տալիս մեծ ընդունակութիւն։ Տեղեկութիւն կայ որ նա եկեղեցում կարդում էր գրքերը յունարէն կամ ասորերէն լեզուով, ապա թարգմանում էր իր կարդացածը հայերէն և ժողովուրդը



լսում էր նրան մեծ հետաքրքրութեամբ։ Այդպիսի հոգեւորականներ շատ չը կային Հայաստանում և աւանդութիւնը շարունակում է թէ ուր որ չէր լինում Մեսրոպը, այնտեղ ժողովուրդ էլ չէր հաւաքւում, որովհետև ոչ ոք ոչինչ չէր հասկանում։

Այս հանգամանքը պարզ ցոյց էր տալիս Մեսրոպին էլ, Սահակ կաթողիկոսին էլ թէ որքան մեծ նշանակութիւն ունի մայրենի լեզուն, թէ որքան կարեւոր է որ հայ ժողովուրդը իր գործածական լեզուով ծանօթանայ քրիստոնէութեան։

Ուրիշ կերպ անհնար էր կռուել Հայաստանի մէջ դեռ գոյութիւն պահպանող ազգային հինկրօնի դէմ, ժողովրդականացնել քրիստոնէութիւնը։

Այս բանի մէջ Մեսրոպը համոզուեց մանաւանդ այն ժամանակ, երբ Սահակ կաթողիկոսը նրան ուղարկեց Գողթան գաւառը քարոզչական նպատակով։

Գողթանի մասին մեր պատմագիր Մովսէս Խորենացին ասում է թէ դա գինով առատ մի երկիր է և այդտեղ հայ գուսանները (աշուղները) երգում են մեր ազգային աւանդութիւնները· Ինչպէս ամէն տեղ, մեզանում էլ ազգային հին կեանքը, մեր հին հերոսները կապուած էին կրօնի հետ։ Գողթան գաւառում հայոց հեթանոսական կրօնը դեռ պինդ էր պահւում և դա հասկանալի է։ Մի ժողովուրդ, որ երգ ու նուագ է դարձրել իր անցեալի դէպքերը, որ ոգևորւում է հին-հին գործերով, չէր կարող հեշտու-



թեամբ բաժանուել իր այդ պաշտամունքից։

Մեսրոպը չը կարողացաւ խօսքով համոզել գողթնեցիներին և դիմեց բռնութեան։ Տեղական հայ իշխանի օգնութեամբ քանդեց հեթանոսական տաճարները, հալածեց քուրմերին։ Սա յաղթութիւն էր, բայց բռնի ույժի, կոպիտ բռնութեան յաղթանակ։ Աւերմունք, պատերազմ, գուցէ և արիւն—այս բոլորը պիտի սթափեցնէին կոպիտ միջոցներով տարուած քրիստոնեայ քարոզչին, և Մեսրոպը այդ տեսարանների առջև աւելի ևս համոզուեց թէ այդպէս գործել չէ կարելի, թէ պէտք է ժողովուրդը դաստիարակել, թէ պէտք է ազդել նրա մտքի ու զգացմունքի վրայ հասկանալի խօսքով և ոչ թէ բռունցքով։

Նորից նա զգում է թէ որքան անհրաժեշտ է որ ժողովրդի ձեռքը գիրք տրուի: Եւ այս համոզմունքը այնքան պայծառ ու տանջող է, որ նա նոյն իսկ կիսատ է թողնում իր առաքելութիւնը Գողթան գաւառում և վերադառնում է Արարատեան երկիրը, որպէսզի իր մտքերը յայտնէ հայոց կաթողիկոսին և ճար առաջարկէ նրան:

Բայց Սահակ կաթողիկոսը նոր չէր պիտի հասկանար նոյն մեծ անհրաժեշտութիւնը. նա էլ տարիներից ի վեր մտածում էր այդ մասին: Համակրանքով վերաբերուեց Մեսրոպի մտքին, իր աջակցութիւնը դրեց նրա տրամադրութեան տակ և երկուսը միասին սկսեցին խորհրդակցել: Երկուսի համար էլ պարզ էր որ պէտք է հայերէն տառեր հնարել



և հայերէն լեզուով գրականութիւն ստեղծել: Բայց ինչպէս անել այդ բանը:

Խորհրդակցութիւններ են տեղի ունենում, ժողովներ են գումարւում ձեռնհաս հոգևորականներից: Բայց ոչ մի ճար չեն գտնում. Այդ միջոցին Թագաւորական գահի վրայ նստած էր Վռամշապուհ Թագաւորը, որ մի երջանիկ զուգադիպութեամբ նոյնպէս գրասէր մարդ էր: Երկիրը վայելում էր խաղաղութիւն և Վռամշապուհը իր ջանքերն էլ միացրեց Մեսրոպի ու Սահակի ջանքերին: Թագաւորը գիտէր որ Միջագետքում, Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ, կան հայերէն տառեր: Բերել են տալիս այդ տառերը, Մեսրոպը հաւաքում է աշակերտներ, բաց է անում դպրոց:

Ի՞նչ էին Դանիէլի տառերը։ Նա արդեօք ի՞նքն էր հնարել, թէ նրանք գոյութիւն ունէին Հայաստանում հին ժամանակներից։

—Յայտնի չէ։ Մեսրոպը ուսուցիչ է։ Արդեօք առաջի՞նը հայերի մէջ։ Նրա դպրոցը սկսում է սովորել դանիէլեան գրերը։ Երկու տարի աշխատում են, բան չէ դուրս գալիս։ Տառերը անկատար են, բաւարարութիւն չեն տալիս։ Ի՞նչ անել։ Ժողովներ են տեղի ունենում, շատ են տքնում այդ անկատար այբուբենը յարմարեցնելու համար։ Ո՛չ մի յաջողութիւն։

Սպառելով այն բոլոր միջոցները, որոնք կային երկրի մէջ, Մեսրոպը որոշում է օգնութիւն և ճար որոնել դրսում, լուսաւոր ազգերի մէջ։ Եւ իր աշակերտների հետ մի ճանապարհորդու-



թիւն է սկսում։ Թագաւորը, կաթողիկոսը ճանապարհ են դնում նրան «սուրբ համբոյրներով»։ ինչպէս պատմում է Մեսրոպի աշակերտ Կորիւնը։ Եւ իրաւ, դրա պէս մի սուրբ առաքելութիւն առաջին անգամն էր դուրս գալիս հայոց աշխարհից։ Խաւար ու տգէտ, կործանման հասած մի երկիր մարդիկ էր ուղարկում լոյս որոնելու։

Նրանք գնացին Միջագետքի Եդեսիա քաղաքը։—Այստեղ էլ Մեսրոպի դիմումներն ու որոնումները մնում են ապարդիւն և նա գնում է Սամոսատ քաղաքը, ուր նոյնպէս ոչինչ օգնութիւն չէ գտնում։ Կորցնելով օտար քաղաքակրթութեան վրայ դրած յոյսերը, նա ապաւինում է իր սեփական ուժերին։

Եւ մեր առջև, որքան թոյլ են

տալիս մեզ հասած սակաւախօս տեղեկութիւնները, ներկայանում է մտքի երկունքի այսպիսի մի պատկեր։ Ամբողջապէս յափշտակուած իր գաղափարով, Մեսրոպը հաւատացողի ջերմեռանդութեամբ, արտասուքներով պաղատում էր երկնքի օգնութիւնը։ Նա յիշում էր մարգարէի այն խօսքերը թէ «Երբ հեծեծաս, այն ժամանակ կապրես», մի գեղեցիկ խօսք, որ ցոյց է տալիս թէ դաժան աշխատանքն է կեանք ստեղծում։ Այդ անդադար ճգնութիւնները, հոգածութիւնը, յափշտակութիւնը մտքի երկունքի նշաններն են... Գործում է միտքը տենդային արագութեամբ, գաղափարները տեսիլների ձև են ստանում և հոգու լարուած կարողութիւնը, վերջապէս ամփոփում է տարրների



մտածմունքները, ձուլում է նրանց որոշ պատկերների մէջ. երկունքը վերջացաւ, հայկական տառերի ձևերը արդէն տպաւորուած են այդ րոպէից մեծ մարդու սրտում։

Հռոփանոս անունով մի յոյն ճարտար գծագրողի օգնութեամբ Մեսրոպը վայելուչ ձև է տալիս տառերին։ Հայոց այբուբենը գտնուած կամ թէ բարեկարգուած ու լրացուած վերջացած էր։ Իր հանճարեղ ստեղծագործութեան պտուղը հետն առած՝ Մեսրոպը վերադառնում է Վաղարշապատ մայրաքաղաքը։

Եւ տօն էր հայոց աշխարհում։ Մայրաքաղաքը հրճուանքով ընդունեց Մեսրոպին։ Եւ այդ մեծ ժողովրդական ընդունելութեան արժանացողը մի մեծանուն զօրավար չէր, մի նուաճող թա-

գաւոր չէր, այլ համեստ մի վարդապետ, որ բերում էր գրագիտութեան լոյսը։ Մտքի յաղթանակը առաջին անգամն էր սրտագին ցոյցերով տօնում Հայաստանը։

Մեսրոպը այնուհետև հայութեան սրբութիւնն էր։ Եւ այս երևոյթը միանգամայն հասկանալի է և բնական։ Բոլոր ազգերը նուիրական ամենաբարձր զգացմունքով են երկրպագում գրին ու գրքին։ Հին աշխարհի հսկայ միտքը, Պլատօն փիլիսոփան, մարդու ամենահրաշալի գործերից մէկն էր համարում տառերի գիւտը։ Նա ասում է, թէ դա այնպիսի մի մեծագործութիւն է, որ տառեր գտնողին պէտք է Աստուած համարել կամ Աստուածու նման մի մարդ։

Տառերի գիւտը տեղի ունեցաւ



404 թուականին։ Բայց կարծիք կայ, որ նրանց վերջնական կարգաւորումը կատարուել է 412 թուականից ոչ առաջ։

---

## ՀԱՅ ԳՐՔԻ ՏՕՆ

1455 թուականին մի հրաշալի դէպք տեղի ունեցաւ մարդկութեան մէջ։ Գերմանական Մայնց քաղաքի մի համեստ արհեստաւոր, Յովհան Գուտենբերգ անունով, երկար տարիների փորձերից ու տանջանքներից յետոյ, իր հնարած միջոցներով տպեց ու լոյս հանեց մի մեծ գիրք—Աստուածաշունչ։

Ժամանակի գիտունները իսկոյն ըմբռնեցին թէ ինչ մեծ լոյս

է ծագել մարդկութեան մտքի համար։ Եւ նրանցից մէկը գրում էր թէ բոլոր այն ազգերը, որոնք գիր ունին, պիտի փառաբանեն Գուտենբերգին «աստուածային գովեստներով»...

Դա, ճիշտ որ, գրի ահագին յաղթանակն էր, որ Մայնց քաղաքից գնաց նուաճելու ամբողջ երկրագունդը։ Մինչև այդ երջանիկ գիւտը՝ գիրքը գրւում էր ձեռքով և չափազանց թանգ էր, մատչելի էր միայն հարուստ անհատներին։ Բացի այդ՝ ձեռագիր գիրքը արտագրւում էր մի կամ մի քանի օրինակ, ուստի և չէր կարող տարածւել ամեն տեղ, մտնել ժողովրդի մէջ։

Տպագրութեան գիւտը էժանացնում էր գիրքը, ժողովրդականացնում էր գիրքը, տարածում էր նրան աշխարհի բոլոր



ծայրերում։ Ամբողջ մարդկութեան մէջ հաստատւում էր մտքի հեշտ, արագ և էժան հաղորդակցութեան միջոց։ Ո՛րքան մեծ է մեզ համար այն մարդը, որ հնարել է երկաթուղին. բայց նրանից աւելի մեծ է այն մարդը, որ հնարել է տպագրութիւնը, որովհետև այս գիւտը սկսել է նոյն դերը կատարել մարդկային մտքի համար՝ երկաթուղու գիւտից շատ ու շատ առաջ։

Ահա ինչ է նշանակում 1455 թւականը, Համաշխարհային պատմութեան. այդ մեծ օրից անցել է ընդամենը 57 տարի. 1512 թւականն է։ Վենետիկ ենք, ընթերցող։

Ի՞նչ ենք տեսնում։

Ս. Մարկոսի շքեղ մայրաքաղաքում աւելացել է արւեստի և արդիւնաբերութեան մի նոր աս-

պարէզ—տպարանը: Ո՛րքան սիրել է վենետիկցին այս նոր գիւտը: Մինչդեռ ամբողջ մեծ երկիրներ կան, ուր դեռ չեն մտել Գուտենբերգի մամուլն ու տառերը, այստեղ միայն, այս եօթանասուն փոքրիկ կղզիների վրայ բանում են ոչ թէ մի, ոչ թէ երկու, տասը տպարան, այլ երկու հարիւր յիսուն հատ: Տասնեակ հազարներով գրքեր են տպւում և Ս. Մարկոսի նաւերը այս նոր տեսակի ապրանքը տանում տարածում են ամեն տեղ, լոյս են սփռում:

Այսօր է որ տպարան բանալը, գիրք տպելը հեշտացել է, մեծ գործ չէ համարւում: Այսպէս չէր այն ժամանակները: Արուեստը դեռ նոր է, կատարելագործւած չէ և հարկաւոր է ահագին դըժւարութիւններ ոտնակոխ անե-



լու խիզախութիւնն ունենալ: Վենետիկի տպագրիչները հասարակ արհեստաւորներ չեն, այլ և գիտնականներ: Աշխատում ջանում են օր ու գիշեր, աղօթելով են իրանց գործին մօտենում, զգում են որ սրբագործութիւն են կատարում:

Եւ երկու հարիւր յիսուն տպարանների քաղաքը միայն իր մասին, միայն Իտալիայի մասին չէ մտածում: Գրքեր նա տպում է զանազան լեզուներով: Այս նոր գործի մէջ էլ խօսում է Ս. Մարկոսի վաճառականական հանճարը: Գիրքը ապրանք է և Վենետիկը գրքեր պատրաստում է և այն ազգերի համար, որոնք դեռ տպագրութիւն չունին, բայց սրանք իր առևտրական գործողութիւնների շրջանի մէջ են գտնւում: Նա գրքեր տալիս էր սլաւոնական ազգերին, նա մտա-

ծում էր գրքեր տալ և արաբերէն լեզուով, մահմեդական Արևելքին։

Ահա այս Վենետիկի մէջ, 1512-ին, մի գեղեցիկ օր, որ տարաբախտաբար անյայտ է մընացել, այդ հարիւրաւոր տպարանների մէկից լոյս աշխարհ է գալիս հայերէն լեզուով մի հատ գիրք։ Նրա անունն է «Պարզատումար». Ժողովրդի գործածութեան համար մի Օրացոյց է։ Արևելքի հին բազմաչարչար ազգը իր յատուկ ինքնուրոյն գրքերով այսպիսով գալիս է, տպագրութեան պատմութեան այս վաղ առաւօտեան, բազմելու գերմանացու, ֆրանսիացու, իտալացու, անգլիացու և այլ եւրոպացիների կողքին։

Սա հրաշքի պէս մի բան էր։

Եւ ո՞ւմ ենք պարտական այդ հրաշքը։



Տարաբախտաբար յայտնի չէ։ Տպագրութեան սկիզբը այսպէս է համարեա բոլոր ազգերի մէջ։ Անունները չէին յիշւում, նոյն իսկ աշխատում էին թագցնել թէ գրքերը տպագրուած են, որովհետև նոր արուեստը դեռ ժողովրդականացած չէր և դեռ ձեռագիր գրքերի հմայքն էր տիրում։

Այսքանը կայ միայն, որ հետևեալ տարին, 1513-ին, նոյն Վենետիկում, նոյն տառերով և նոյն տպարանական նշանով տըպուեցին էլի չորս հատ հայերէն գրքեր և դրանցից մէկի յիշատակարանում ասուած է թէ գործը կատարուել է «մեղապարտ Յակոբի» ձեռքով։ Ո՞վ է. այդ Յակոբը—չը գիտենք։ Արդեօք Վենետիկի մէջ ապրող հայերից մէ՞կը։ Եւ ի՞նչ է նրա արածը։ Արդեօք Վենետիկի տպարանա-

տէրերից մէկն էր թէ լոկ հայերէն տառերի նմուշներ է հայթայթել վենետիկցի մի տպարանատիրոջ։

Ուրաքանչիւր ազգ առանձին պարծանքով է յիշատակում իր առաջին տպագրիչին։ Մեզ, հայերիս, միայն այս մի հատիկ անյայտ անունն է ժառանգութիւն մնացել—«Մեղապարտ Յակոբ», որ և ասում է. «Ով որ կարդայք մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»։ Հարկաւոր էլ չէ թողութիւն խնդրելը, երբ մի ամբողջ ժողովուրդ երախտապարտ է նրան։

Նա դրեց հայ տպագրութեան սկիզբը։ Թէ որքան դժւար գործ էր այդ նորութիւնը, կիմանանք հէնց նրանից, որ 1513 թւականից յետոյ երկարատև լռութիւն է իջնում հայ տպագրու-



թեան վրայ։ Հայերէն գիրք մէկ էլ տպւում է, դարձեալ նոյն Վենետիկում, 52 տարուց յետոյ, 1565-ին։ Ճիշտ է, կայ մի տեղեկութիւն, որ թոյլ է տալիս ենթադրելու թէ այդ թւականից առաջ էլ եղել է հայերէն տպագրութիւն, բայց մանրամասն տեղեկութիւն չը կայ այդ մասին։

Այս անգամ մենք արդէն շատ բան գիտենք այն մարդու մասին, որ 1565-ին տպագրեց «Սաղմոս»։ Դա Աբգար դպիր անունով հայն էր, Թիւրքիայի Թոքատ քաղաքից։ Ժամանակի կաթողիկոսը, Միքայէլ, չը կարողանալով այլ ևս դիմանալ պարսկական հարստահարութիւններին, թողեց Էջմիածինը և գնաց իր հայրենի Թոքատ քաղաքը, ուր ժողով կազմեց և նրա համաձայնութեամբ ուղարկեց Աբգարին

և նրա որդի Սուլթանշահին Հռոմ, որպէս զի խնդրէ պապին ազատել քրիստոնեայ հայերին մահմեդականների տիրապետութիւնից։

Աբգարը կաթողիկոսի խնդրագիրը տարաւ Հռոմ, բայց պապից ստացաւ առաջարկութիւն որ հայոց եկեղեցին հպատակւի կաթոլիկ եկեղեցուն։ Տառապող քրիստոնեաների այս վերջին յոյսն էլ ջուրն էր ընկնում։ Աբգարն ու իր որդին Վենետիկում տառեր փորագրել տւին, տպեցին «Սաղմոսը»։ 1567 թւին Աբգարն արդէն Կ. Պոլսումն է և այստեղ է սկսում տպագրութիւններ։ Եւ այսպիսով, Թիւրքաց մայրաքաղաքը երկրորդ տեղն է, ուր հիմնաւորւում է հայ տպարանը։

Սակայն այստեղ էլ սկզբնաւորութիւնը անկայուն էր, օր-



պակաս։ Աբգարի գործը շարունակող չեղաւ։

Այնուհետև 1584-ին տպւում է մի գիրք Հռոմում, «Տոմար Գրիգորեան» անունով։ Իսկ երեք տարուց յետոյ, 1587-ին, Հայաստանցի մի քահանայ, Յովհաննէս Տէրզնցի, որ իր որդու հետ գնացել էր Եւրոպա, տպագրեց Վենետիկում մի «Սաղմոսարան»։

Վերջացաւ 16-դ դարը, իսկ հայ տպագրութիւնը դեռ չէր դուրս եկել իր սաղմնային դրութիւնից։ 1512-ից յետոյ գրեթէ մի դար է անցել և այդ ամբողջ ժամանակամիջոցում տպւած հայերէն գրքերի թիւն է 9 հատ։

Սա յուսահատական մի դանդաղկոտութիւն էր, եթէ ի նկատի առնենք որ եւրոպական ազգերի մէջ տպագրութիւնը օրը օրին ընդարձակ չափեր էր ընդունում…

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

## 1812 թւի հարիւրամեակը

Անցեալ տարի օգոստոսի 26-ին, Ռուսական կայսրութեան բոլոր մասերում՝ շատ շքեղ հանդէսնե-րով տօնուեց հայրենական պատե-րազմի 100-ամեակը· այդ հան-դէսների միջոցին կային շատ շատեր, որոնք բուռն ոգևորու-թեամբ մասնակցելով տեղի ու-նեցող ուրախութիւններին, տե-ղեկութիւն իսկ չունէին թէ բանն ինչումն է... Դեռ լաւ է որ քա-ղաքներում, գլխաւոր աւաններում տեղի ունեցող դասախօսութիւն-ներ, զրոյցներ, սինեմատոգ-րաֆներ որոշ չափով պարզում էին հանդէսների նշանաւորութիւնը պատմութեան անծանօթ ժողո-վրդին, բայց և այնպէս մենք համոզուած լինելով որ կան վայ-րեր, որտեղ ոչ դասախօսութիւն, և ոչ որևէ բացատրութիւն տուող չէ եղել, ուստի աւելորդ չի լինի այդպիսիների համար սոյն հա-մառօտ տեսութիւնը որը բերում ենք «Հասկեր» մանկական ամ-սաթերթից...

—

Կան անուններ, որոնց ամենքը գիտեն և որոնց վրա ամենքը զար-մանում են։

Այդպիսի անուններից է Նա-պոլէոնի անունը։ Մի հասարակ, չքաւոր փաստաբանի որդի, մի օտարական, նա դարձաւ Ֆրան-սիայի կայսր իր ահագին խելքի և հազուագիւտ ընդունակութիւն-ների շնորհիւ։Նրան հպատակեց,

բացի Ֆրանսիայից, Իսպանիան, Իտալիան, Բելգիան, Հոլլանդիան, նրա հրամանին էին լսում Աւստրիան, Պրուսիան, գրեթէ ամբողջ արևմտեան Եւրոպան. մէկ Անգլիան էր, որին նա չէր կարողանում հասնել նաւեր չունենալով, մէկ էլ Ռուսաստանը: Նա իր եղբայրներին, փեսային, զօրավարներին թագաւոր էր նստեցնում զանազան երկիրներում, վռնդելով նախկին պետերին: Ժողովուրդներ, տէրութիւններ գլուխ էին խոնարհում նրա առջև և կարծես՝ սահման չը կար նրա ուժին, նրա կամքին:

Նապոլէոնը ուզեց և Ռուսաստանը իր ձեռքին խաղալիք դարձնել, բայց Ալէքսանդր I կայսրը չուզեց նրա ամեն հաճոյքը կատարել: Այն ժամանակ Նապոլէոնը 600 հազար զինուոր հաւաքելով



եւրոպական ամեն ազգերից՝ յանկարծ յարձակւեց Ռուսաստանի վրայ: Նա դիմեց ուղիղ Մոսկւայի վրայ: Ճանապարհին ռուսական զօրքերը փորձեցին նրան կանգնեցնել Բորոդինօի դաշտում:

Արիւնահեղ կռւից յետոյ երկու կողմերն էլ պահպանեցին իրենց դիրքերը, բայց ռուսական զօրքերը այնպիսի մեծ կորուստներ ունեցան, որ ռուսաց հրամանատար Կուտուզովը աւելի լաւ համարեց խնայել ուժերը, չը սկսել ճակատամարտը ու աշխատել աւելի ուժեղանալ: Նա հրամայեց զօրքերին ետ քաշւել: Բորոդինօի կռիւը տեղի ունեցաւ 1812 թ. օգոստոսի 26-ին: Նապոլէոնը առաջ քաշւեց ու առանց արգելքի առաւ Մոսկւան:

Բայց նոր էին ֆրանսացիք մտել Մոսկւա, որ քաղաքը սկսեց

ամեն կողմից այրուել։ Բնակիչները դատարկել էին քաղաքը և ապա կրակի մատնել։ Ծխից և տօթից ֆրանսացոց մեծ մասը ստիպուեց մնալ քաղաքից դուրս, բացօդեայ դաշտում։ Շուտով զգացուեց ուտելեղէնի պակասութիւն, ապա շատ շուտ սկսուեց սոսկալի ցուրտ ձմեռը. Ֆրանսական զօրքերը ամեն կողմից թշնամիներով շրջապատուած, չը կարողանալով իրենց հայրենիքի հետ կապ պահպանել, ձիւնի մէջ թաղուած, քաղցից ու ցրտից ստիպուած ամեն կարգապահութիւն մոռացան։ Ռուս ժողովուրդը իր սիրած կայսեր կոչին հետևելով՝ ինքը կամաւոր զինւոր էր կազմում ու յարձակւում ֆրանսացիների վրա։ Ընդհանուր հայրենասիրութիւնն էր արթնացել, ռուս մարդը կռւում էր իր հայրե-



նիքի, իր ազատութեան համար, ու Նապոլէոնի զօրքերը սկսեցին պարտութիւն կրել, ցիրուցան լինել, զինւորներից շատերը սովից ու ցրտից ազատուելու համար, ինքնակամ գերի էին ընկնում, շատերը սառան ռուսական անծայր դաշտերում, տափաստաններում։ Նապոլէոնը ինքը շտապեց Ֆրանսիա նոր զօրքեր հաւաքելու, իսկ նրա ահագին զօրաբանակից միայն խղճալի մնացորդներ հասան ռուսական սահմաններին։

Ալէքսանդր I դրանով չը բաւականացաւ, նա անցկացրեց իր զօրքը դէպի Արևմուտք, օգնեց ճնշուած եւրոպական ազգերին, նրանց ես միացրեց իր հետ և մի շարք սոսկալի ճակատամարտներից յետոյ հարկադրեց Նապոլէոնին հրաժարուել

գահից ու հեռանալ Ֆրանսիայից, ապա վերջը և ընդմիշտ Եւրոպայից…

ՀԱՍԿ.



## ՀՐԱՇՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Դեռ շատ հին՝ նախապատմական շրջաններից սկսած արևելքը յայտնի է իր մոգական, կամ կախարդական արուեստով, որ տարածուած էր գլխաւորապէս կապաշտական կրօնների սպասաւորների՝ քուրմերի մէջ։ Քուրմերը շնորհիւ իրենց այդ գաղտնի գիտութեան, բարոյեապէս իշխում էին ոչ միայն ռամիկի, բարուկների, այլ և իշխողների, թագաւորների վրայ, որով նրանք ահագին ազդեցութեան, հարստութեան տէր էին դառնում…

Կախարդութիւն, հրաշք կամ աչքակապութիւն գուցէ ներկայիս լեզուով գիտութեան մէջ յայտնի

հիպնոտիզմ, կռապաշտական կրօնի հիմքը լինելով, բնական էր որ քրիստոնէական վարդապետութեան տարածողներ խէթ աչքով նայէին, թէ այդ արուեստին և թէ նրա գործադրողներին. իսկ այն երկրներում ուր քրիստոնէութիւն պաշտօնական կրօն դարձաւ, այնտեղ սկսեց սոսկալի հալածանք, որի հետևանք եղաւ այն, որ այդ հետաքրքիր գիտութիւնն անյայտացաւ ներկայիս քաղաքակիրթ համարուած երկիրներից։ Նոյնիսկ հայոց պատմութեան մէջ կան այդ հալածանքի նմուշներ, ուր մեր սուրբ հայրապետները, քրիստոնէութեան նախնական շրջանում հաւաքում և այրում էին կռապաշտական կրօնին և նրա գաղտնիքներին վերաբերող գրքեր, նշաններ, որոնց մէջ անշուշտ կլինէին նաև կա-



խարդական գիտութեան վերաբերեալ գաղտնիքներ։ Թէև քրիստոնէութիւնն ևս որպէս կրօն, իր իրաւական հիմք հրաշքներով է դրել, որպէս մովսիսականութիւն։

Սուրբ գրքի մէջ յիշուած բազմաթիւ հրաշքներից՝ յիշենք միայն մէկը, որ հետաքրքիր է մեր բերած ներկայ օրինակի տեսակէտից։—Երբ Մովսէսն Աստուծոյ հրամանով փարաւօնի ներկայութեամբ իր առաջին հրաշքներն էր կատարում, փարաւօնի հրամանով նոյնը կատարեց նաև նրա քուրմը...

Այսպէս թէ այնպէս՝ շնորհիւ քրիստոնէութեան հալածանքին, այդ գիտութեան գաղտնիքներն անյայտ մնացին մեր ժամանակի գիտնականներին, որոնցից շատերը նրա հետքը գտնելու յու-

սով անհագին դժւարութիւնների տոկալով, ճանապարհորդում են հեռաւոր Հնդկաստանի, ովկիանեան կղզիների և Աֆրիկայի խորքերը: Դրանցից շատերը ականատես են եղել բազմաթիւ կախարդական հրաշքների, աչքակապութիւնների և հետաքրքիր դէպքերի, բայց թափանցել այդ հրաշքների պատճառների մէջ, ուրիշ խօսքով ծանօթանալ նրա գաղտնիքներին, անկարող են եղել, շնորհիւ այդ արւեստագէտների չափազանց խիստ գաղտնապահութեան: Ահա այդ տեսակ հրաշքների, կախարդութեան կամ աչքակապութեան մի նմուշ է, որ պատմել է ականատես անգլիացի նաւավարներից մէկը, և որը ռուսերէն լրագրից թարգմանաբար տպել էր «Հորիզոն»-ը:

«Առաջ գնալով 100 մղոն, վեր-



ջապէս խարխուլ ձգեցինք Օստ-Ինդիայի ծովափնեայ փոքրիկ քաղաքներից մէկի նաւահանգստում, որտեղի փոքրիկ հրապարակի վրայ, միջահասակ, վտիտ, կիսամերկ հնդկացու մէկի շուրջը հաւաքւած է ամբոխը:

Հնդկացին սուր սուլոց-շւացով, դէպի երկինք ձգեց ինչ որ իր. որին՝ հանդիսականները ընդունեցին թոկի տեղ. բոլորեքեան համոզւած, որ իսկոյն, թոկը ցած կընկնի գետին, սակայն թոկը վեր ու վեր է բարձրանում և կարծես թէ երկնքից քաշ է ընկած անշարժ:

Ֆակիրը ծափ տալով, երկրորդ անգամ սուլում է, գետնի տակից, ուղիղ իր առջևից դուրս է գալիս մի երեխայ, որի ձեռքից բռնելով վերցնում շպրտում է դէպի վեր երկինք. դէպի ամպերից քաշ

ընկած թոկը։ Ամբոխը· շունչները քաշած, սրտատրոփ նայում են դէպի վեր թէ ինչ է լինելու երեխայի հետ, և ահա, երեխան հասնելով օդի մէջ ճօճւող թոկի ծայրին և բռնելով այն՝ թոկի վրայով բարձրանում է դէպի ամպերը և աչքի տեսողութիւնից աներևոյթանում։

Մի վայրկեան չանցած ինքը ֆակիրը նոյնպէս դէպի երկինքը սլանում և անյայտանում ամպերի ծալքերում։ Յանկարծ ամպերի միջից գետին են թափւում երեխայի գլուխը· ոտքերը, ձեռքերը և մարմնի միւս մասերը ու լսելի ձայնով խփւում գետնին։

Անմիջապէս, թոկի վրայով ցած է իջնում և ինքը ֆակիրը, որը ժողովելով մի տեղ մարմնի մասերը երեխային կենդանացնում է, որից յետոյ երեխան իսկոյն



ոտի կանգնելով վազվզում է ֆակիրի շուրջը և եկած ճանապարհով անյայտանում։

Երկրորդ դէպքը։ Նոյն նաւի վրայ է բարձրանում ֆոկուսնիկը· նաւաստիներից մէկի ձեռքից վերցնելով մէկ հատ կոկոսի ընկոյզ նրա միջից թափում է 12 դոյլ ջուր։ Յետոյ պահանջելով մէկ մեծ մատուցարան—ափսէ, ածում է նրա մէջ մէկ գալլօն ջուր ու բռնում ձախ ձեռքով, իսկ աջ ձեռքը տանում դէպի ճակատը։ Այդ միջոցին նաւաստիները· որ հետաքրքիր նայելով աչք էին ճպում, տեսնում են թէ ինչպէս ֆակիրի ձեռքի ջրով լիքը մատուցարանը աստիճանաբար փոքրացաւ անյայտացաւ և ապա, իսկոյն նորից աստիճանաբար մեծացաւ առանց մի կաթիլ ջրի, որը յանձնեց տիրոջը։

Նոյն ֆակիրը, հանելով իր վըզին փաթաթած կարմիր թաշկինակը, փռեց նաւի տախտակամածի վրայ ու սկսեց շրջապտոյտ պարելով ինչ որ անհասկանալի խօսքեր շշնջալ ու երկու րոպէ չանցած մէկը միւսի յետեւից դուրս են գալիս թաշկինակի տակից կապիկ և օձ. Թաշկինակը ինքն իրեն սկսում է ուռչելով մեծանալ. որի տակից նոյնպէս դուրս է գալիս և ոտի կանգնելով այս ու այն կողմ գլուխ խոնարհելով, անխօս բարեւում մի գեղեցիկ, քաղցր հայեացքով ժպտադէմ 14 տարեկան աղջիկ։

Նաւաստիները ներշնչուած ինքնամոռացութիւնից ուշքի գալով. մէկը միւսին հարց է տալի թէ արդեօք քնած չենք կամ երազի մէջ, բայց ոչ, նրանք յիրաւի արթուն էին և նրանց աչքի առաջ



կանգնած են կապիկը, օձը և սիրուն աղջիկը։

Մօտաւորապէս տասը րոպէ նաւաստիներին ուրախացնելուց յետոյ, ֆակիրը երրորդ անգամ ծափ տալով շշնջում է ու սուլում, և ահա երեքն էլ ինչպէս ծուխ աստիճանաբար հետզհետէ մանրանալով անյայտանում են, իսկ թաշկինակը վերցնելով նորից կապում վզին, նաւաստիների շնորհակալութեան հետ վերցնելով նրանց կամաւոր վարձատրութիւնը—հեռանում է նաւից։

Եւ այդ ամենը այնքան հապճեպ ու զարմացնող, որ սկզբից հանդիսականները մտքով կուլ գնալով ֆակիրի մտածելակերպին, նրանց ուղեղների զգայուն նեարդերը անդրադարձեց ֆակիրի մտքի մէջ առաջացող երեւակայութեանը. որոնք իրապէս տեսնում

էին այն, ինչ որ ֆոկուսնիկը ցանկացաւ ցոյց տալ։ Այդ միջոցին նաւապետը նստած լուսանկարչական գործիքը (аппарат) ձեռքին, իւրաքանչիւր մի վայրկեանին տեղի ունեցող տեսարանները լուսանկարում էր, իբրև սիրող։ Եւ ինչ, ահա մեծ զարմանք լուսանկարուել էին միմիայն հանդիսատես նաւաստիների պատկերները զարմացական հայացքով, որոնց մէջ կանգնած էր ֆակիրը, ամենայն լրջութեամբ, չատ հանդիստ. ուրիշ ոչ մի բան. ոչ կապիկ, ոչ օձ, ոչ աղջիկ և ոչ մի բան։ Ֆակիրը կարողացաւ նաւաստիներին հմայելով ենթարկել իր հիպնոսին, նա իր կամքի ուժով. իր ուղեղի մէջ նկարածը. անդրադարձուց դիմացի կենդանի-խօսուն մարդկանց ուղեղներում, որոնք մտածողու-



թեան զգայուն մեքենաներն են. իսկ անշունչ. ազգայ. անկենդան аппаратին լուսանկարչական գործիքին ի հարկէ ոչ։





## ՓՈՍՏ

Ամեն տեսակ փոստային թղթակցութիւն, նոյնպէս և փոստային վճարների (մարկաների) վաճառում տեղի չի ունենայ՝

Զատկի և Ծննդեան առաջին օրերը։

Միայն երկու ժամով, առաւօտեան 9—11 ժ., գործ է կա-



տարւում փոստատանը 1) Նոր Տարուն, 2) Աւետման, 3) Աւագ Ուրբաթ և Շաբաթ օրերը, 4) Զատկի երկրորդ օրը, 5) Կայսեր և Կայսրուհիների անուանակոչութեան օրերը։

Սահմանափակւում է 3 ժամով —այն է առաւօտ 8—11 ժ. բոլոր կիրակի օրերը։

Բաց նամակներ։ Բաց նամակներ գրում են փոստային վարչութեան կամ մասնաւոր մարդկանց պատրաստած բլանկների վրայ։ Վերջինները պատրաստուած պիտի լինին պետականի նման առանց նրա զինանշանի, միևնոյն մեծութեան և ամուր թղթի վրայ. միջազգային նամակները պիտի ունենան հետևեալ վերնագրերը, „Унiон постал", „Карт Постал".

Սոյն վերնագրերը կարելի է

գրել նաև ձեռքով։ Թոյլ է տըրւում միւս երեսի վրայ փակցնել եարլիկներ տպած հասցէներով, իսկ հասցէի երեսում նոյն տեսակ եարլիկներ ստացողի տպագիր հասցէով։ Եարլիկների մեծութիւնը աւելի չպիտի լինի նշանակածից. երկարութիւնը $1\frac{1}{2}$ վերշոկ իսկ լայնութիւնը $\frac{1}{2}$ վերշոկ։ Տեղական եւ օտար քաղաքների բաց նամակների գինը 3 կոպ. է. պատասխանով 6 կոպ.։ Միջազգային բաց նամակն արժէ 4 կոպ. պատասխանի բլանկով 8 կոպ., Առանց նամականիշ բլանկների հատ արժէ $\frac{1}{4}$ կոպ.։

Թոյլ է տըւում ուղարկելու բաց նամակներ պատկերներով. այդպիսի բլանկների երեսի կողմը բաժանուած է երկու մասի. կէսը հասցէի և միւս կէսը նամակի համար։



Փակ նամակներ։ Պետութեան սահմաններում օտար քաղաքներ ուղարկելու իւրաքանչիւր փակ նամակին, որ քաշում է 1 լոտ, փակցւում է 7 կոպ. նամականիշ, իսկ 1 լոտ և կէս մսխալ քաշող արտասահմանեան նամակին՝ 10 կոպ.։ Օտար քաղաքներ ուղարկելու փակ նամակի քաշը 5 ֆունտից աւել չպիտի լինի, իսկ տեղականը 1 ֆ.։ Արտասահմանեան նամակների քաշը չէ սահմանափակւած։ Տեղական նամակի համար առնում են 3 կոպ.։

Բաց և փակ նամակները կարելի է ուղարկել առանց մարկայի, բացի պաշտօնական հիմնարկութիւնների անունով ուղղածները. այդ դէպքում ստացողը վճարում է կրկնակին։ Եթէ որ նամակը պիտի մնայ փոստատանը մինչև ստացողի պահանջելը, այդ

դէպքում պէտք է նամակի վրայ գրել „до востребованія" (ցպահանջ) խօսքը։ Այդպիսի նամակը պահւում է փոստատանը վեց ամիս։

—

**Փաթեթներ։** (Бандерольныя отправленія)։ Փաթեթներով կարելի է ուղարկել տպած գրութիւններ, լուսանկարներ, գործի թղթեր և ապրանքների նմուշներ։ Տպած գրութիւնների մէջ թոյլ է տրւում մացնել ձեռացագիր 1) ուղարկելու ժամանակը, ստորագրութիւնը կամ առևտրական տունը. պարապմունքը և ուղարկողի բնակութեան տեղը. 2) հեղինակի ձեռագիր ձօնը. 3) ուշադրութիւն գրաւելու գծեր և նշանները. 4) ապրանքների գները. 5) հրաւիրատոմսերի մէջ գրել հրաւիրածների անունները,



ժամանակը, նպատակը և ժողովւելու տեղը, իսկ այցետոմսերի մէջ—ուղարկողի հասցէն ու նրա կոչումը, շնորհաւորական խօսքեր կամ ուրիշ քաղաքավարի արտայայտութիւններ ոչ աւելի հինգ խօսքից։

Օտար քաղաքների փաթեթները 4 ֆունտից աւել չպիտի լինին, իսկ ապրանքների նմուշները 27 լոտից. միջազգային փաթեթների մեծ քաշը 200 գրամմ է (մեր 4 ֆունտ 28 լոտ), իսկ ապրանքների նմուշները 27 լոտ։

Օտար քաղաքների իւրաքանչիւր 4 լոտ, իսկ միջազգային իւրաքանչիւր 50 գրամմ (2 լոտ 2½ մսխալ) փաթեթի համար առնում են 2 կոպ.։ Բանդերօլը ապահովեցնելու համար պէտք է վճարել նաև 7 կոպ. օտար քաղաքներ ուղարկելիս, իսկ 10 կոպ. ար-

տասահման ուղարկելիս։ Ճանապարհածախսը ամբողջովին չվճարած փաթեթները ուղարկւում են հասցէին և ստացողից վերցնում են պակաս մնացածի կրկնակին։ Ճանապարհածախս չվճարած փաթեթները չեն ընդունւում։

Ապահովւած նամակների վրայ պէտքէ գրել «заказное» բառը։ Իւրաքանչիւր ապահովւած նամակից, քաշի համար սահմանւած գնից զատ, ապահովութեան համար վերցւում է 7 կոպէկ պետութեան սահմաններում իսկ արտասահմանեան նամակի համար 10 կոպ., Այդպիսի նամակները տեղ չհասցնելու համար փոստային վարչութիւնը վճարում է 10 ր. պետութեան մէջ և 12 ր. 50 կոպ. արտասահման նշանակած նամակի փոխարէն։



Պահանջը պէտք է յայտնէ ուղարկողը։

Ապահովւած նամակներով արգելւում է ուղարկել փող։

Արժէքաւոր ծրարներով կարելի է ուղարկել ամենայն տեսակ տոկոսաբեր թղթեր, մուրհակներ, կուպոններ և այլն, որոնց գնահատութիւնը կախւած է ուղարկողի կամքից։ Արժէքաւոր ծրարները 15000 ր. աւել գնահատած չեն ընդունւում, իսկ փակերը 500 ր,։

Փոստով դրամ փոխադրելու համար վերցնում են 1 ր.—25 ր. 15 կ., 25 ր.—100 ր. 25 կ., 100 ր.—125 ր. 40 կ., 125 ր.—200 ր. 50 կ., 200 ր.—225 ր. 65 կ., 225 ր.—300 ր. 75 կ., 300 ր.—325 ր. 90 կ., 325 ր.—400 1 ր. 400 ր.—425 ր. 1 ր. 15 կ., 425 ր.—500 ր. 1 ր. 25 կ., հետա-

գրով փոխադրելու համար բացի վերոյիշեալից վերցնում են նաև 25 խօսքից բաղկացած սովորական հեռագրի վճար։

Փողային փոխադրութիւնները կատարւում են առանձին բլանկներով. փոստային վճարը մատուցանւում է մարկաներով, իսկ հեռագրի համար վճարում են կանխիկ փող։

Արտասահման փոխադրութիւն կատարւում է բացառապէս փոստով։ Միացեալ նահանգները ընդունում են մինչև 200 ր.—(կամ 100 դոլլար). Աւստրո Ունգարիա—254 կրօն—(100 ր.), Գերմանիա—216 մարկ, Բելգիա—266 ֆրանկ, Շվէյցարիա—266 ֆրանկ, ֆինլանդիա—100 ր. Ֆրանսիա—266 Ֆրանկ։

**Ծանրոցներ** (посылки) Ծանրոցներով կարելի է ուղարկել



պետութեան մէջ, բացի թղթէ դրամներից ու արծաթ (մետաղեայ) փողերից. փակ նամակներից և հեշտութեամբ բռնկւող նիւթերից, ամեն ինչ, ոչ աւելի 3 փութից։ Ծանրոցները ուղարկելու ժամանակ նրանց պէտք է փաթաթել մոմլաթով (клеенка), կաշիով կամ քաթանով։ Դրսից կապւում է թոկով, որի ծայրերը պէտք է կնքւեն փոստատանը արքունական կնիքով։ Ծանրոցներն ուղարկւում են գընահատած կամ առանց գնահատութեան, ուղարկողի կամքից է կախւած այդ։ Ծանրոցների մէջ արգելւում է դնել նամակ, հակառակ դէպքում վերցւում է տուգանք իւրաքանչիւր լօտից 1 ր., Բոլոր ծանրոցներն ընդունւում են առանձին բլանկներով, որ կոչւում են сапроводительный

адресъ, որի վրայ փակցւում են ճանապարհավճարը մարկաներով։ Ծանրոցների գնահատութ. 45,000 ր. բարձր չպիտի լինի. գնահատութեան դէպքում վրան պէտք է գրել «цѣнная». Ուղարկողի հասցէն պէտք է նշանակել ծանրոցի վրայ։

Արտասահման ուղարկւող ծանրոցները 5 կիլօգ.—12 ֆ. 6½ լօտից աւելի քաշ չպիտի ունենան. ծանրոցի չափը 13½ վերշոկից (ամեն կողմից) երկար չպիտի լինի և գնահատութիւնն էլ 187 ր. 50 կ. (500 ֆր.) ոչ աւել. այդ պահանջներին համապատասխանող ծանրոցի համար վերցնում են 70 կոպ. մինչև Գերմանիա ու Աւստրիա, 90 կոպ. մինչև Ֆրանսիա, ապահովութեան տուրք առնում են առաջին երկրների համար իւրաքանչիւր 112 ր. 50 կ.



4 կոպ., իսկ երկրորդի համար 10 կ.։ Միւս պետութիւնների համար կայ առանձին սակագին։

Այն դէպքում, երբ փչանում կամ կորչում է ծանրոցը, փոստային վարչութիւնը վճարում է տիրոջը ոչ աւելի ծանրոցի վրայ նշանակած գնից, իսկ չգնահատւած ծանրոցի համար, որի քաշը 12 ֆ. 7 լօտից աւելի չէ, 9 ր. 37 կոպ.։

Թեթև ծանրոցները, որոնք բաղկացած են լինում հովանոցներից, ձեռնափայտերից, պատկերներից, յատակագծերից և այլն 1 արշին 6½ վերշոկից երկար չպիտի լինին։

Ծանրոցներ ուղարկելու համար ամբողջ կայսրութիւնը բաժանւած է գօտիների, 1) Առաջին գօտին է Եւրոպական Ռուսաստանը Անդրկովկասի հետ. 2)

Երկրորդ գօտին է Արեւմտեան Սիբիրը, Թուրքեստանը, Անդրըկասպեան երկիրը և Տուրգայեան շրջանը. 3) Երրորդ գօտին է Արեւելեան Սիբիրը (Նահանգներ Ենիսեան և Իրկուտսկի, շրջաններ Եակուտեան, Ամուրեան, Անդր-Բայկալեան և Պրիմօրեան Սախալին կղզու հետ)։ Վերջին գօտուն են պատկանում Մանճուրիայ փոստային հիմնարկութիւնները։

Ծանրոցներն ըստ իրանց քաշի բաժանւում են չորս տեսակի. 1) մինչև 2 ֆ, 2) ծանրոցներ—2 ֆ.—7 ֆ, 3) 7 ֆ.—12 ֆ. և 4) 12 ֆունտից աւել։

4000-ից վերև ամեն տեսակ տարածութեան համար 35 կոպ.։

—

**Վերադիր վճար։** Վերադիր վճարով կարելի է ուղարկել ապա-



հոված փակ նամակներ, ապահոված փաթեթներ, արժէքաւոր ծրարներ և ծանրոցներ այն ժամանակ, երբ ուղարկողը ուզում է որ ստացողը վճարէ այս գըլխից իրան հասանելիք գումարը։ Վերադիր վճարով ծրար չի ուղարկւում արտասահման։ Այդպիսի ծրաների վրայ պիտի գրել հասցէի վերև „съ наложеннымъ платежомъ". գումարը 500 ր. աւելի չպիտի լինի, որը պէտք է գրել բառերով։ Փոստային ծախք. բացի ընդհանուր տուրքերից, իւրաքանչիւր ր. համար գանձւում է 2 կ. ընդամենը 10 կոպ. ոչ պակաս։ Այսպէս եթէ վերադիր վճարը 50 ր. է փոստային ծախքը կլինի 1 ր., իսկ եթէ 5 ր.—10 կ.։ Այդպիսի ծրարները տրւում են հասցէատիրոջ նշանակած վերադիր վճարը լրովին ստանա-

լուց յետոյ։

Տէրերին չյանձնած նամակներ վերադարձւում են այնտեղ, որտեղից ուղարկւած են եղել նրանք։ Այդպիսի նամակները պահւում են այնքան, մինչև որ հաստատապէս իմացւում է, որ տէրը չկայ հեռանալու պատճառով. եթէ գնացած տեղը յայտնի է լինում, այդ դէպքում փոխում են քաղաքի անունը և առանց վարձատրութեան ուղարկւում ըստ պատկանելոյն։ Այդպիսի տեղ չը հասած նամակների պահելու ժամանակամիջոց 6 ամիս է։

Իսկ արժէքաւոր ծրարները պահւում են փոստատանը 2 ամսից ոչ աւել։

---



## ԿԱՆՈՆՆԵՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Տոմսակների վաճառումը եւ բագաժի ընդունելութիւնը ըսկսւում է մայրաքաղաքներում $1^1/_2$ ժամ, առաջնակարգ կայարանում 1 ժամ և մնացած կայարաններում $^1/_2$ ժամ գնացքը մեկնելուց առաջ։

2. Իւրաքանչիւր գնացքի համար վաճառւում են առանձին տոմսակներ, որոնց վրայ յատուկ կնիքով նշանակւում է ամսաթիւը։ Առանց այդ կնիքի կամ ոչ այդ օրւայ ու գնացքի կնիքը կրող տոմսերը կորցնում են իրանց նշանակութիւնը։

Իւրաքանչիւր տոմսակի վրայ նշանակւած է լինում, թէ նա քանի օրւայ ոյժ ունի։ Օրը հաշւում են կէս գիշերից մինչև հե-

տևեալ կէս գիշերը։

3. Ճանապարհորդութիւնը ընդմիջելու դէպքում, այսինքն երբ ճանապարհորդը դեռ տեղ չհասած ուզում է մի որևէ կայարանում կանգ առնել, պէտք է տոմսակը ներկայացնէ կայարանի պետին (НАЧАЛЬНИКЪ), որ համապատասխան կնիք խփէ։ Ճանապարհ ընկնելուց առաջ էլ պէտք է նորից խփել տալ. հակառակ դէպքում տոմսակը կը կորցնէ իր ոյժը։

4. Իւրաքանչիւր հասակաւոր ճանապարհորդ իրաւունք ունի 1 փութ բագաժ տանելու, իսկ երեխաները 20-ական ֆունտ, եթէ դրանից աւելի է բագաժը, այն ժամանակ աւելորդի համար պէտք է վճարել համապատասխան սակագնով։

Եթէ բագաժը վնասուած է կամ



պակասել է, իսկոյն պէտք է յայտնել կայարանի վարչութեանը բագաժը ստանալիս, իսկ եթէ կորել է, պէտք է վարձատրութիւնը պահանջել՝ այդ մասին գրաւոր յայտարարութիւն տալով մի ամսուայ ընթացքում, ժամանակը հաշուելով ուղարկած օրից։

6. Հինգ տարեկանից փոքր երեխաները կարող են ճանապարհորդել հասակաւորների հետ առանց տոմսակի, իսկ 5—10 տարեկան երեխաները վճարում են իսկական տոմսակի 1/4 գինը։ 10-ից աւել տարիք ունեցողները վճարում են նոյնքան, որքան հասակաւորները։

Տոմսակի արժէքը կախուած է ճանապարհի երկարութիւնից։

---

# ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ

—Երեխաների ֆիզիքական կեանքը պէտք է մեր մանկավարժական մտածումներուն և զբաղումներուն մէջ առաջին տեղ գրաւէ:

—Խաղացող երեխան նուիրական էակ մը է, այն երեխան որ չի խաղար և կամ որին կարգելեն խաղալ, կդադարի երեխայ լինելուց:

—Խաղը երեխայի կեանքի կէսն է:

—Երեխան խաղի և ուրախութեան այնպիսի կարիք ունի, ինչպէս բոյսը լոյսի ու ջրի:

—Ուրախութիւնը առողջապահական ամենազօրաւոր միջոցն է:



—Մարմնամարզութիւնը իբր առողջապահութեան անհրաժեշտ պահանջ՝ պէտք է ամեն ուսումնարաններում պարտադիր դարձնել:

—Մարմնամարզութիւնը բոլորի համար անհրաժեշտ է, իսկ թոյլ կազմուածք ունեցողներու համար կեանքի պայմանն է:

—Զօրաւոր մայրերն են, որ զօրաւոր ազգեր առաջ կը բերեն, ուստի ամենամեծ նշանակութիւն պիտի տալ աղջկանց ֆիզիքական կրթութեան, մանաւանդ պէտք է աշխատել նրանց կուրծքի և կոնքերի զարգացնելու մասին:

—Ֆիզիքական կրթութիւնը աղջկանց համար աւելի անհրաժեշտ է քան տղաներուն:

—Բացօդեայ խաղերը պէտք է ազգային կրթութեան ամենազօրաւոր միջոցներէն մինն համա-

րել։ Խաղն և ուրախութիւնը բաւական չէ, որ հեռացնում են մարդուս կոպտաբեր զբաղմունքներից, այլև ծառայում են որպէս միտքը բարոյացնելու, կամքը կրթելու, ազնիւ քաղաքացի, և ուժեղ ազգ պատրաստելու հիմնաւոր միջոց։

—Այն ծնողներ, որոնք արգելում են իրենց որդոց խաղն և ուրախութիւնը, համարելով այն չարութիւն, մեղանչում են թէ բնութեան և թէ բարոյականութեան դէմ։

—Խաղալ երեխայի համար անհրաժեշտութիւն է, բայց երեխայի խաղին հսկել և ուղղութիւն տալ նոյնքան անհրաժեշտութիւն է։

ԴԷՄԻՑ-ԴԷՆԻՑ

## ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՆ

Եւրոպայում Ռուսաստանը բռնում է 4,846,000 քառակուսի վերստ տարածութիւն, Ասիայում՝ 14,867,000 քառ. վերստ. ընդամենը 19,713,000 քառ. վերստ։

Եւրոպայում հիւսիսից հարաւ Ռուսաստանը ձգւում է 3,401 վերստ, իսկ արևելքից արևմուտք 2,868 վ.։

Ասիայում նա ունի հիւսիսից հարաւ 4,383 վերստ, իսկ արևելքից արևմուտք՝ 8,652 վերստ։

Ամբողջ Ռուսական կայսրութեան շրջագիծը կազմում է 64,909 վերստ։

Այս ընդարձակ կայսրութիւնը կառավարելու համար բաժանուած է մասերի. ունի 78 նահանգ, 19 օբլաստ, 2 վիճակ, 1 մաս։ Սրանցում կան 769 գաւառներ, 919 քաղաքներ և աւաններ 567,577 գիւղեր։

Ռուսական կայսրութեան բնակիչները
ըստ ազգութեան։

| | |
|---|---|
| Ռուսներ . . . . . . . | 80,000,000 |
| Թուրքեր . . . . . . . | 10,000,000 |
| Լեհեր . . . . . . . | 7,035,000 |
| Հրէաներ . . . . . . . | 3,700,006 |
| Գերմանացիք . . . . . | 2,000,000 |
| Սւանէտներ . . . . . | 1,300,000 |
| Ֆիններ . . . . . . . | 4,365,000 |
| Լիտովցիներ . . . . . | 3,600,000 |
| Լեզգի, Չերքէզ և Չէչէն | 800,000 |
| Տաճիկներ . . . . . . | 1,500,000 |
| Կալմիկներ և Բուրիատ. | 4,000,000 |
| այեր . . . . . . . . | 1,400,000 |



| | |
|---|---|
| Ռումիններ . . . . . . | 100,000 |
| Գիւրգեր և Օսետիններ | 250,000 |

Վրացիներ մօտ 1 միլ.։

Ամենայն տարի, ըստ ստատիստիկայի, Ռուսաստանի բնակչութիւնն աճում է մօտ 2 միլիոն, այնպէս որ 1897 թ. միօրեայ աշխարհագրութիւնից յետոյ (որի ժամանակ 139 միլիոն էր) այդ հաշւով այժմ պիտի լինի մօտաւորապէս 155 միլ.

Ազգաբնակութիւն ըստ սեռի

Եւրոպական Ռուսաստան. 1000 տղամարդուն ընկնում է 1043 կին, Լեհաստանում՝ 995, Կովկասում՝ 901, Սիբիրում՝ 943, Միջին Ասիայում՝ 860, Ֆինլանդիայում՝ 1025 իսկ ընդհանրապէս Ռուսաստանում միջին թւով 1000 տղամարդուն ընկնում է 1011 կին։

## ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Օրավարձի հաշւարար*

| Ամսական | Օրական | Ամսական | Օրավարձը պետք է լինի | | Ամսական | Օրավարձը պետք է լինի | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ր. | Կոպ. | Ր. | Ր. | Կոպ. | Ր. | Ր. | Կոպ. |
| 5 | 16 2/3 | 23 | — | 76 2/3 | 41 | 1 | 36 2/3 |
| 6 | 20 | 24 | — | 80 | 42 | 1 | 40 |
| 7 | 23 1/3 | 25 | — | 83 1/3 | 43 | 1 | 43 1/3 |
| 8 | 26 2/3 | 26 | — | 86 2/3 | 44 | 1 | 46 2/3 |
| 9 | 30 | 27 | — | 90 | 45 | 1 | 50 |
| 10 | 33 1/3 | 28 | — | 93 1/3 | 46 | 1 | 53 1/3 |
| 11 | 36 2/3 | 29 | — | 96 2/3 | 47 | 1 | 56 2/3 |
| 12 | 40 | 30 | 1 | — | 48 | 1 | 60 |
| 13 | 43 1/3 | 31 | 1 | 3 1/3 | 49 | 1 | 63 1/3 |
| 14 | 46 2/3 | 32 | 1 | 6 2/3 | 50 | 1 | 66 2/3 |
| 15 | 50 | 33 | 1 | 10 | 51 | 1 | 70 |
| 16 | 53 1/3 | 34 | 1 | 13 1/3 | 52 | 1 | 73 1/3 |
| 17 | 56 2/3 | 35 | 1 | 16 2/3 | 53 | 1 | 76 2/3 |
| 18 | 60 | 36 | 1 | 20 | 54 | 1 | 80 |
| 19 | 63 1/3 | 37 | 1 | 23 1/3 | 55 | 1 | 83 1/3 |
| 20 | 66 2/3 | 38 | 1 | 26 2/3 | 56 | 1 | 86 2/3 |
| 21 | 70 | 39 | 1 | 30 | 57 | 1 | 90 |
| 22 | 73 1/3 | 40 | 1 | 33 1/3 | 58 | 1 | 93 1/3 |

## ՕԴԵՐԵՒՈՅԹԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ

*(Ըստ Էֆիմերտու)*

## 1913 Թիւ

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարուայ իշխողը կլինի Հրատը՝ Կշիռ նշանով, որ տուն է Լուսաբերին։ Այս պատճառով տարին երևում է ամուլ և ցամաք։ Ձմռան սկիզբը ցուրտ կլինի, Ջրային սաստիկ քամիով, որից ծառերն արմատահան կլինին. մէջը՝ բարեխառն, վերջը ցուրտ։ Գարունն անձրևոտ. ամառը գետեր կցամաքեն, խոնաւութիւնը կպակասի. աշունը եղեմնախառն (դռաւ). պէտք է քիչ հաց ուտել և շատ

գինի խմել։ Դիմոկրիտոսն ասում է. գինին և ձէթը առատ կլինին։ Տարիս յաջողակ է վազ և այգի տնկելու, բայց ոչ ծառեր, մեծ անասուններն և ընտանի կենդանիքը կսատկեն, տենդը կշատանայ։ Աստծուն աղաչենք, որ երկրաշարժ չհանդիպի։ Աշխարհի այս պտտելու ժամանակ Երևակը երկնքի 12-դ տան քառանկիւնի հայեցուածով արև հետ. այլև լուսինը երկնքի երրորդ տանը կըցւած հրատի հետ՝ ուր վատաբացուներն են, ցոյց է տալի մարդկանց վնաս, նեղութիւն, և ձանձրոյթ ու ձախորդութիւն, մինչև այն աստիճան՝ որ էլ չի տեսնուի սէր, ոչ բարեկամութեան և ոչ ճշմարտութեան, այլ հասարակ աւերումն։ Այս տարի հոկտեմբերի 12-ից 21-ի մէջ ժամ և կէս արևը կխաւարի, երբ լուսնի հետ



երկնքի ութերորդ տանը շրջի Կշիռ կենդանակերպի տակ, այս պատճառաւ գուշակւում է մի մեծ և հզօր թագաւորի և կամ իշխանի մահ, սով կլինի և հասարակ մահ տարաժամ։ Եւ այն թագաւորները և իշխաններն, որոնք ծնան Կշռի և կամ Խոյի իշխանութեան տակ կկրեն անհանգստութիւն և ուրիշներից աւելի նեղութիւն։

---

## ՏԱՐԻՆ ԳՈՒՇԱԿՈՂ ՏԱՆՈՒՏԷՐ

(Ըստ Էֆիմերտու)

Խոյն երբ տանուտէր լինի*) գարունը կլինի ազնիւ, և ամեն Հռոմում բանի առատութիւն. բոյսեր կչորանան, բարի վաս-

*) Այս տարուայ տանուտէրը Խոյն է

տակ. Բաբելոնում սով կլինի. Ասորիքում առատ գինի. Հնդկաստանում մահ. Դլկաթայ երկրից մինչև Հիւսիսի ծովը խաղաղութիւն. Արևմուտքում երկրաշարժ և շատ քաղաքաց կործանում։ Երբ հիւսիսի կողմից աստղ դուրս գայ, քաղաքները իրար կխառնուեն. Աստուածանից կամ Թագաւորից մեծ մարդկանց կորուստ։ Երբ աղեղն իջնի՝ բոլոր աշխարհի խաղաղութիւն. ամռանը բարի վաստակ, այլ և անձրև. մեղր, շատ բերք. թեթև ձիւն և մարդկանց առողջութիւն։

---

### Լուսնի օրերի գուշակութիւններ

1. Օրը բարի է. ամէն բանի, Ադամը նոր ստեղծւեց, սերմանել, տնկել, ճանապարհ գնալ, հիմք



դնել։ Նոյը տապանի սկիզբ այսօր արաւ։ Մովսէսն այսօր ժողովրդին Եգիպտոսից հանեց։ Գաբրիէլն այսօր ողջոյն տուաւ Մարիամին։ Սօղոմոնն տաճարի սկիզբն այսօր արաւ։ Ծնածը կարճակեաց կլինի, հիւանդը 14, 21 և 28 օրից յետոյ կառողջանայ, կորածը կգտնւի. արիւն թողնելը դեղնութիւն և բորոտութիւն կըբերէ, երազն բարի կկատարւի։

2. Օրը բարի չէ. Նախաստեղծն այսօր ընկաւ, Կայէնն այսօր սպանեց Աբէլին հիւանդը մինչև 12 օրը երկմիտ, յետոյ կլաւանայ, կորածը մինչև 40 օրում կգըտնւի, տունկ տնկել, նաւ ուղղել լաւ է. ծնածը կլինի երկայնակեաց, խոնարհ և շնացող, արիւն թողնելը լաւ չէ. երազն երեք օրից կկատարւի։

3. Օրն ամէն բանի բարի է. Հեղինէն խաչն այսօր գտաւ, Սողոմոնն այսօր ծնաւ։ Գնել, վաճառել բարի է, կորածը կգտնուի, փախածը յետ կդառնայ, ծնածը շնորհալի և պատերազմող՝ բայց կարճակեաց կլինի, արիւն թողնելը հիւանդութիւնը և եար կը բերէ. երազն բարի կկատարուի։

4. Օրը լաւ չէ. մի՛ վաճառիր, մի գնիր, Նաբուգոդոնոսորն այսօր տաճարը քակեց, Մոգերն այսօր ընծայ բերին, Հերովդեսը այսօր Մոգերից խաբուեցաւ. հիւանդը կմեռնի, ծնածը շնորհալի կլինի և մեծութեան կըհասնի, արիւն թողնելը, վնաս է. երազը սուտ է։

5. Օրը ամէն բանի բարի է. մեղուն լաւ կգայ, սերմանել, տնկել, ճանապարհորդել, նաւարկել. Նոյը այսօր մտաւ տապանը, Սօղօմոնը



տաճար շինեց. կորածը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնածը երեխայ հասակում կմեռնի, արիւն թողնելը բոլորութիւն կբերէ. երազը բարի կկատարուի։

6. Օրը ամէն բանի բարի է. Տէրն այսօր առաքեալներին քարոզութեան ուղարկեց. մանուկներին ուսման տալ, գնել, վաճառել, տնկել և սերմանել. լաւ է. կորածը մինչև 40 օրը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնածը հիւանդոտ՝ բայց բաղդաւոր կլինի. արիւն թողնելը շահաւէտ է. երազը տարին կատարուի։

7. Օրը վատ է. Աստուած այսօր Ադամին և Եւային դրախտից դուրս արաւ, հիւանդը շատ կնեղանայ, ծնածը պիսակոտ, գող և երկարակեաց կլինի, արիւն թող-

նելը վնաս է, երազը սուտ է։

8. Օրը բարի է. լեզուներն այսօր բաժանուեցան՝ կորածը կգըտնուի, հիւանդը կասկածաւոր է, ծնածը ձայնեղ կլինի է կծերանայ, արիւն թողնելը վնաս է, կերածը չի մարսի և սիրտը կըդողայ. երազը 8 օրից յետոյ կըկատարուի։

9. Օրը բարի է. Քրիստոսն այսօր մկրտուեցաւ. գնել, վաճառել, ճանապարհորդել, երեխայ մկըրտել. Թագաւոր տեսնել, մեծի մօտ գնալ, դատաստան մտնել, բարի է, հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեաց կլինի, արիւն թողնելը բարութիւն կբերէ, երազը բարի կկատարուի։

10. Օրը բարի չէ. բան մի



գործիր, ամեն բանից պատրաստ կաց, մի երդուիր, մազը մի հարթիր, փախածը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեանց կլինի, արիւն թողնելը վնաս է, երազն երեք օրից յետոյ կկատարուի։

11. Օրը բարի չէ. աշխարհը ջրհեղեղով կորաւ, մի գործիր, մի երդնուր, մի երդում տար, ջուր մի մտնիր, Կէտն այսօր Յովնանին կուլ տուաւ, Ադամն այսօր դրախտից դուրս արուեց, հիւանդը կըժշկուի, ծնածը շուտ կըմեռնի, արիւն թողնելը վնաս չէ, երազը օրը կկատարուի։

12. Օրը չար է. մի երդնուր և մի երդուեցներ, ամեն բանից զգուշ կաց և աղօթիր, հիւանդը կմեռնի, ծնածը միջակեաց կլի-

նի, արիւն թողնելը շահաւէտ է, երազն երեք օրից յետոյ կկատարուի։

13. Օրը բարի է. գործել, հիմք դնել, հարսանիք անել. հիւանդը 8-երորդ օրը նեղութիւն կկրէ և կլռասի, ծնածը իմաստուն կլինի և կայրի, արիւն թողնելը փնաս է, երազը բարի կկատարի։

14. Օրը չար է. մի գործիր, հիւանդը մինչև 15 օր նեղութիւն կկրէ՝ յետոյ կլաւանայ, ծնածը թոյլ կլինի և չար մահ կունենայ, արիւն թողնելը կհիւանդացնէ, երազը 40 օրից կկատարուի։

15. Օրը բարի է. շինել, տընկել, վաճառել, բոլորը բարի է, Քրիստոսն այս օր դժոխքն աւերեց, կորածը կգտնուի, հիւանդ 4



օրից յետոյ կփռասւի, ծնածը երկարակեաց և զօրաւոր կլինի. արիւնը թողնել շահաւէտ է, երազը օրը կկատարուի։

16. Օրը բարի է. սերմանել, տնկել, հարսանիք անել, երեխային տալ ուսումնարան, մեծի մօտ գնալ, կորուստը կգտնուի, հիւանդացածը 28 օրից յետոյ կառողջանայ, ծնածը գեղեցիկ, երկարակեաց և մեծատուն կլինի, արիւնը թողնել կփռասէ, երազն երեք օրից յետոյ կկատարուի։

17. Օրը բարի է. հիմք դնել, պատերազմել, հիւանդը 18 օրից յետոյ կլաւանայ, ծնուածը կլինի դւարթ և գեղեցիկ, երազը նոյն օրը կկատարուի։

18. Օրը բարի է. հարսանիք

անել, ճանապարհորդել, հիւանդը կառողջանայ, ծնածը կասկածաւոր և շատախօս կլինի. արիւն թողնել օգտաւէտ է, երազ բարի է.

19. Օրը բարի է. սերմանել, տնկել, երեխային ուսումնարան տալ մեծի մօտ գնալ. հիւանդը կմեռնի, ծնածը բազդաւոր և հանճարեղ կլինի, բայց հարբեցող լեզուն վատ և վարքով շնացող. արիւն թողնելը վնաս է երազը բարի կկատարւի:

20. Օրը բարի է. սերմանել, շինել, վաճառել, ճանապարհորդել, մեծի մօտ գնալ, հիւանդը կվնասւի, ծնածը յաղթանդամ, խոնարհ և աղօթասէր կլինի, բայց կրակը կամ ջուրը կընկնի, միայն ողորմածասիրութիւնը կազատէ՝



եթէ ունի. արիւնը թողնել վնաս է, երազն էլ սուտ է:

21 Օրը չար է. մի գործիր, մի վաճառիր, մի գնիր, մի երդնուր և մի երդւեցնիր, հիւանդը կմեռնի, ծնածը աղօթասէր կըլինի, արիւն թողնելը առողջարար է. երազը սուտ է:

22. Օրը չար է. մեղք չգործես, որ չյուզւես, բայց հիմք դնել, վաճառել, գնել, մանուկ ուսումնարան տալը լաւ է. հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեաց և մեծերին սիրելի կը լինի. արիւն թողնելը օգտակար է, երազը բարին կկատարւի:

23. Օրը բարի է. գնել, վաճառել, ճանապարհ գնալ, լաւ է. փախածը կդառնայ, կորածը կը

գտնուի, հիւանդը հոգևարք կլինի, ծնածը բարեսիրտ, բաղդաւոր և յաջողակ կլինի, արիւն թողնելը շահաւէտ է, երազն 30 օրից կըկատարուի։

24. Օրը չար է. ամեն բանից պատրաստ կաց. ճանապարհ չըգնալ. չվաճառել, չգնել. մեծի մօտ չգնալ, փախածը կվերադառնայ, հիւանդը կառողջանայ, ծնուածը անօգուտ և անվաստակ կլինի. արիւն թողնելը լաւ է. երազը սուտ է։

25. Օրը չար է. մի երդնուր, մի երդուեցնիր, տեղ մի գնար, փախածը կվերադառնայ, հիւանդը կմեռնի. ծնուածը շէկ, շատամօրուս և ցանկացող կլինի. արիւն թողնելը լաւ է. երազը սուտ է։



26, Օրը բարի է. գործիր, բայց մի երդուիր, փոխ առնել, ճանապարհ գնալ, սերմանել, հարսանիք անել բարի է, հիւանդը վնաս կը կրէ ծնուածը շուտ կմեռնի, արիւն առնելը լաւ է. երազը բարի է։

27. Օրը բարի է. վաճառել, գնելու համար, կորածը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնուածը աստուածավախ և բարի կլինի, արիւն թողնելը մահ կպատճառէ, երազը սուտ է։

28. Օրը բարի է ամեն բանի համար, երեխանց ուսման տալ, մեծերի մօտ գնալ, հարսանիք անել, կորածը էլ չի գտնուի, հիւանդը չի ապրի, ծնուածը գեղեցիկ և իմաստուն կլինի, արիւն թողնելը վնաս է. երազը 3-օրից յետոյ կկատարուի։

29. Օրը բարի է ամեն բան գործելու համար, տնկել, շինել, հարսանիք անել, հիւանդը կմեռնի, ծնածը հանճարեղ և բաղդաւոր կլինի, բայց արբեցող, լեզւով սիրելի, գործքով շնացող, արիւն թողնելը վնաս է, երազը լաւ է։

30. Օրը բարի է, կնքել, պսակել, հիմք դնել ճանապարհ գնալ, կորածը կգտնուի, նաւը մի նստիլ, հիւանդը կառողջանայ, ծնուածը բաղդաւոր կլինի, բայց հարբեցող, արիւն թողնելը վնաս է. Երազը բարին կկատարուի։

---

# ԵՐԱԶԱՑՈՅՑ

## Ա.

Աստուած երազի մէջ տեսնել լաւ է և բարի, ամեն չարից ու փորձանքից կազատուի, թէ աղքատ է կհարստանայ, թէ հիւանդ է կառողջանայ, թէ բանտումն է կազատուի։ Աբեղայ, տեսնելը՝ փառք է, երբեմն էլ կռիւ։ Ագարակ՝ կարողութեան ընդարձակութիւն է։ Ագռաւ տեսնելը՝ թշնամիք իր վրայ կյարձակուեն։ Աթար՝ դարսած մեծամեծ նեղութիւն է։ Աթոռը բարձրութիւն է։ Աթոռի նստելը աստիճանի բարձրութիւն է։ Ալևոր իրեն տեսնելը՝ շատ երկար կապրի։ Ակներ

գոյնզգոյն՝ բարեկամ իշխանաւորներ են։ Աղ տեսնելը՝ սգւոյ նշան է։ Աղքատը չար կուի խափանումն է։ Աղբակոյտ տեսնել՝ նեղսրտութեան մէջ կընկնես։ Աղաւնին՝ շնորհք է։ Աղբիւր՝ շատ բաներից օգտուելու նշան է։ Ցամաքած աղբիւր եկամուտի պակասութիւն է, Աղբիւրից ջուր խմել՝ բարիի կհանդիպես։ Աղբիւրից ջուր տանել՝ շնորհի կարժանանաս։ Աղեղ տեսնել՝ բարութեան նշան է։ Աղի՝ ձուկը՝ հոգս և կսկիծ է։ Աղուէսը՝ թշնամուց երկիւղ կպաաւի։ Թէ աղուէս որսաս թշնամուդ կյաղթես։ Աղջիկ տեսնել՝ բաղդ և խնդութիւն է։ Աղջիկ ամուսնացնել, հոգսերի թեթևացումն է։ Մեռած աղջիկ տեսնել՝ բաղդի կործանումն է։ Աղքատին հիւրասիրել՝ օրհնութիւն կվայելես։ Աղքատին հալա-



ծել՝ բաղդիդ կհարուածես։ Ամպ, հոգսերի կուտակումն է։ Ամպի գոռալ՝ թշնամուց վնաս կգայ Այգի տեսնել, հարստանալու նշան է։ Այծը, թշնամի է։ Անապատ տեսնել, զուր յոյսեր են։ Անապատի մէջ լինել, անվերջ աղքատութիւն է։ Անդամալոյծ տեսնելը՝ անբաղդութիւն է։ Անթառամ ծաղիկը, բաղդի նորոգումն է։ Անծեղը բարեգուշակ դէպք է։ Անկողին մտնել, բաղդի հետ կհաշտուի։ Անկողնից դուրս գալը, ծանրութիւնից կազատուի։ Անձրևը, անսահման բարիք է։ Անտառը, անհատնում բաղդաւորութիւն է։ Անօթ ժանգոտ կամ կոտրած, յոյսերի խորտակումն է։ Աչք արտասուալից, երկարատև ուրախութիւն է։ Աչք փակել, անբաղդութեան հետևել է։ Աչքի կուրանալը, բաղդից

դրկուել է։ Աչքի հանելը, կնոջ կամ որդու մահ է։ Ապարանջան, նեղութիւն է, թեւին անցկացնել վիշտ է։ Ապուր ուտել, բաղդի կարժանանայ։ Առիւծը, մեծ մարդ է, շղթայակապ, իշխանութեան անկում։ Առիւծ թէ պատառեց, կեանքիդ վերջն է։ Առիւծին հեծնել, մեծ բաղդի կարժանանաս։ Առու տեսնել, մեծ շահ է և օգուտ։ Առուի ցամաքել, շահերի պակասումն է։ Աստղ տեսնել, լաւ է, շատ աստղեր տեսնել, ճանապարհ գնալ և շահուել է։ Ատամի ցաւելը, դժբաղդութեան նշան է։ Ատամի հանել, տանը մահ կպատահի։ Ատամ կոտրելը, դժբաղդութեան կը հանդիպես։ Արախչին գլխին ծածկել, գեղեցիկ կին կառնի։ Արխալուղ հագնել, կնոջ հաւատարմութիւն է։ Արաղ խմել, տրտմութիւն է և կսկիծ։ Արեւի



խաւարում մեծ մարդի մահ է։ Արիւն առնելը, հոգսերից կթեթեւանայ։ Արծաթ դրամը բարիքների կպատահես։ Արծաթը, ընտանիքի ծանրութիւն և հոգս է։ Արծիւ տեսնել, բարձր աստիճանի կհասնես։ Արծիւ տան մէջ տեսնել, մեծ փառք է։ Արծիւ որսալը յաղթանակ կտանես. Արծուի թեւերին նստել, բարձրութեան կհասնես։ Արջ տեսնելը, մեծ մարդից երկիւղ կայ։ Արջին սպանելը, վտանգից կազատուես։ Արտ ցանելը, բարեյուսութեան նշան է։ Արտ կանաչ, ընտանիքի բաղդաւորութիւն է։ Արօր շինելը, ապագայի յոյս է։ Արօրով վարելը, լաւ է։ Աւազակին սպանել, վտանգից կազատուես Աւազան, լաւ է, ջրով լիք, առատութիւն է։ Աւազանի մէջ լուացուելը շնորք կստանաս։ Աւետարան տեսնել,

մուրազ է։ Աւետարան համբուրել, իղձը կկատարուի։ Աւերակ, ձախորդութեան նշան է։

## Բ.

Բրինձը տեսնել, հարստութիւն և գանձ է։ Բուրվառ, հակառակութեան նշան է։ Բուրդ սպիտակ և կարմիր, բարի է և լաւ, իսկ սև, չար է և վնասակար։ Բու տեսնել, նեղութիւն է։ Բուի ձայն լսել, դժբաղդ լուր է։ Բորոտութիւն, ոմանց ասելով շահ է, ոմանց վնաս։ Բողկ, քաղել կամ ուտել կսկիծ է։ Բադը, մեծ մարդ է, կամ վաստակ։ Բազէ տեսնել, հակառակորդից զգուշացիր։ Բաժակ լիք, գործիդ յաջողութիւն է, իսկ դատարկ անյաջողութիւն։ Բահը, վատ է։ Բաղ տնկելը, շահ ստանալու յոյս է։



Բամբակը, բարի է։ Բանտ նստել, նեղութիւն է։ Բանալին, լաւ է։ Բանջար քաղել, բարի է և լաւ է։ Բարեկամի հետ կռուել, սիրոյ նշան է։ Բարեկամին մեռած տեսնելը, խնդութիւն է։ Բարձր տեղեր թռչելը, մեծութեան կհասնես։ Բարձրից ընկնել, աստիճանից զրկուել է։ Բեռ շալակելը, ծանր հոգսերի տակ կմտնի։ Բոբիկ մանգալը, թշնամիդ կզօրանայ։

## Գ.

Գայլը թշնամի է։ Գազարը լաւ է, ուտել շահաբեր։ Գանգ տեսնել, վիշտ է։ Գանձ տեսնելը շահաբեր գործ է։ Գառը տեսնել, լաւ է։ Գառ մորթել, գործին վնաս գայ, Գաւազան ձեռքին բռնել, պատիւ է։ Գիւղացի տես-

նել բարութեան կհանդիպես։ Գերանի կոտրել, տան մեծ կմեռնի։ Գերեզման փորելը, յանկարծակի մահ է։ Գերեզմանի վրայ լաց լինելը, մեծ ուրախութիւն է։ Գզիրի կանչելը մեծաւորից վնաս կգայ։ Գինի խմել, աչքալիս է։ Գինդ ունենալ ականջին, զաւակ կծնուի։ Գիր գրելը, շատ բարի է։ Գլուխ սանրել չար բաղդ է. Գլուխ լուանալը, սուգ է և կըսկից։ Գլուխ թրաշել, մահու բօթ կլսես։ Գողին սպանել, թշնամուդ կտապալես։ Գոմ շինել, մեծ շահ է և ուրախութիւն։ Գոմէշ արածել, լաւ է։ Գոյնզգոյն հալաւը ցնծութիւն և ուրախութիւն է Գորտի ձայն լսել, պատերազմի համբաւ է։ Գութան շինելը մեծամեծ բարիք է երկրին։



## Դ.

Դագաղ տեսնել, չարագուշակ լուր է։ Դագաղում իրան տեսնել, շատ կապրի։ Դավուլ խփելը, խռովութիւն է։ Դարման, լիութիւն է։ Դդումը, նեղութիւն և հիւանդութիւն է։ Դեղձ ուտելը, առողջութիւն է և լաւ։ Դև տեսնելը, թշնամուց պէտք է զգուշանալ։ Դմակ ուտել ծանր հիւանդութիւն է։ Դրամ գտնելը, բաղդ և յաջողութիւն է։ Դրացու հետ սեղան նստել, անբաւականութիւն է։

## Ե,

Եափունջի տեսնել, հոգսերի երևումն է։ Եզ տեսնել հիւանդութիւն է։ Եկեղեցի շինել մեծ փառք է։ Եզ տեսնել կամ ուտել,

բարւոյ կհանդիպի։ Եպիսկոպոս տեսնելը, մեծ շնորհքի կարժանանայ։ Երգի ձայն լսելը մեծ աւետիք է։ Երես լուանալ, ծանօթութիւններից կազատուի։ Երազի մէջ երազ տեսնել բարի է և լաւ։

Զ.

Զանգակը, բարի համբաւ է։ Զինւոր դառնալը թշնամու դէմ յաղթող կհանդիսանայ։ Զուռնայ ածելը ուրախալի համբաւ է։ Զօրք և զօրագունդ, ցաւ և հիւանդութիւն է։ Զաֆրան, հիւանդութիւն է։

Է.

Էշ տեսնելը, դովլաթ է, ըստ ոմանց նեղութիւն։ Էրան անելը, տանը բարիք կաւելնանայ։ Էրըժ-



նակ քաղել կամ ուտել, լաւ է։ Էրկանք աղալը, հեռու տեղից ձայն կլսես։

Ը.

Ըղուկ կտրելը, ցաւի կհանդիպի։ Ընծայ տալ, մեծ բարիք է։ Ընկոյզ հաւաքել կամ ուտել, հիւանդութիւն է։

Թ.

Թագաւոր տեսնել, մեծ բարիք է։ Թագ տեսնել, փառքի կարժանանաս։ Թագուհի տեսնել, շնորհ է։ Թաղայ հաց տեսնել, հիւանդը կառողջանայ։ Թաղի տեսնելը, փոքրիկ անյաջողութիւն է։ Թախտ նստելը, մուրազը կկատարուի։ Թան խմելը, դրութիւնը կապահովւի։ Թառ ածելը, բարի լուր

կլաես։ Թարխունը, կսկիծ է։ Թեզ անելը, լաւ է։ Թթու ուտելը, կսկիծ է։ Թոնիրը, լաւ չէ։ Թութուն ծխելը, վիշտ է։ Թուխս իր ձուտերով, հարստութիւն է։ Թուրը, կռուի նշան է։ Թուրք տեսնելը, գործին խարդախութիւն է։ Թռչել բարձր, լաւ է, ցածր վատ է։

Ժ.

Ժամ շինելը, բարի է։ Ժամ գնալը, երկար կեանք է։ Ժամաբար տեսնել, յաջողութիւն է։ Ժամհարը, նեղութիւն է։ Ժամացոյցը, աւետիք է։ Ժայռը, հաստատուն յոյս է։ Ժողովը խռովութիւն է։

Ի.

Իժ տեսնելը, ոխերիմ թշնամի



է։ Իրեն տրտում տեսնելը, ուրախութիւն է, ուրախ տեսնելը, տրտմութիւն է։

Լ.

Լակլակ տեսնելը, բարի է։ Լէկզի տեսնել, վատ է։ Լաց լինել, ուրախութիւն է, Լաւաշ հացը, մեծ պատիւ է։ Լիք ամանը բարիք է։ Լոյս խաղաղութիւն է։ Լւացք անելը, նեղութիւն է։ Լուսին տեսնելը, լաւ է։

Խ.

Խալի գործել, լաւ է, աջողութիւն է։ Խաղող քաղելը, լաւ է։ Խաղող ուտելը, լաց է։ սպիտակ խաչքող, լաւ է։ Խանչալ կրել, քաջութիւն է։ Խաչը յաջողութիւն է։ Խաչ համբուրել, մուրազ է։

Խաչվառը, լաւ չէ։ Խիարը, լաւ է, ուտելը հիւանդութիւն է։ Խըմոր հունցելը, լաւ է։ Խնձոր քաղելը, ուտել, շատ լաւ է։ Խնոցի հարելը, բարիք է։ Խող անյաջողութիւն է։ Խողի միս ուտելը, հիւանդութիւն է։ Խոտ կրելը, լաւ է։ Խորոված ուտելը, հիւանդութիւն է։ Խունկը, բարի է։

## Ծ.

Ծաղիկ քաղել, լաւ է։ Ծաղիկ հոտոտելը, բաղդը կբացուի։ Ծաղիկ փնջել, մուրազ է։ Ծառ տնկելը, յոյս է։ Ծաղկած ծառը, մեծ ուրախութիւն է։ Ծառ բարձրանալը, լաւ է։ Ծափ տալ, ուրախութիւն է։ Ծերունի տեսնել, բարի է։ Ծիծ ուտել, հիմնական բարիք է, Ծիրան ուտել, հիւանդութիւն է։ Ծով ալեկոծեալ խը-



ռովութիւն է։ Ծով հանդարտ, խաղաղութիւն է։ Ծով ընկնել, անյաջողութիւն է, դուրս գալ ապահովութիւն է։ Ծուխ, լաւ չէ։

## Կ.

Կաթ խմելը, լաւ է, Կաթուղիկէ տեսնել, աստիճանի բարձրացում է։ Կաթողիկոս տեսնել, լաւ է։ Կալ տեսնել, բարիք է։ Կամուրջ շինելը, գործի յաջողութիւն է։ Կայծակի ձայն լսելը, խռովութիւն է։ Կատաղած կենդանի տեսնել, վտանգի կհանդիպիս։ Կանթեղ վառուած տեսնել, ընտանիքի խաղաղութիւն է։ Կատու տեսնել, նախանձոտ մարդից զգոյշ կաց։ Կատուին սպանել, կլինդ կմեռնի։ Կարագ ուտելը, լաւ է։ Կարկուտը, անբաղդութիւն է։ Կացին տես-

նել, վատ է։ Կերակուր եփելը,
փորձանք է։ Կապիկ տեսնել,
խարդախ մարդից զգոյշ կաց։
Կառք նստել, լաւ է։ Կին առնել,
լաւ է։ Կշեռքը, թանգութեան
նշան է։ Կողակ ձուկ, հիւանդու-
թիւն է։ Կովը բարիք է, ըստ ո-
մանց հիւանդութիւն է։ Կոյսի
հետ խօսելը, երջանկութիւն է։
Կռունկ տեսնել, բարի գործ է։
Կրակ տեսնելը, փորձանք է։

## Հ։

Համբուրուելը, բարի լուր կլսես։
Հալւայ ուտելը, հիւանդութիւն է։
Համեմ քաղել կամ ուտել, բարի
է։ Հայելի տեսնել, մաքուր վաս-
տակ է։ Հասկ քաղելը, ուրախու-
թիւն է։ Հարսանիք տեսնելը,
խռովութիւն է։ Հաւ տեսնելը,
հիւանդութիւն է։ Հեղեղը, աւեր-



մունք է։ Հերկ անելը, լաւ է։
Հիմք փորել, յաջողութիւն է։ Հի-
ւանդ տեսնել, վատ է։ Հրեշտակ
տեսնելը, մեծ բարիք է։

## Ձ.

Ձեռք լուալը, արդարութեան
նշան է։ Ձէթը լաւ է։ Ձի հեծ-
նել մուրազ է։ Ձիւնը, հալալ աշ-
խատանք է։ Ձմերուկ ուտելը,
լաւ է։ Ձու, հակառակութիւն է։
Ձաւար ծեծելը թշնամուդ կյաղ-
թես։ Ներկած ձու, բամբասանք
է։ Ձուկը, չար լեզու է։

## Ղ.

Ղավուրմայ ուտելը, խիստ
սրտնեղութիւն է։ Ղափլան տես-
նելը, զօրաւոր թշնամի է։ Ղա-
ւաղը, խռովութիւն է։ Ղաւալ

ածելը, ուրախութիւն է։ Ղումաշ հագնելը, հարստանալու նշան է։ Ղաւուն ուտելը, հիւանդութիւն է։

Ճ.

Ճաշակել, սրբութեան նշան է։ Ճառ առելը, մեծ համբաւ ստանալ է։ Ճանապարհ գնալը, բարի է։ Ճրագ վառուած, բաղդաւոր զաւակներ ունենալու նշան է։ Ճրագնաւոր տեսնելը, բարի է։

Մ.

Մարգարիտ տեսնելը, շնորհք կստանաս։ Մազ կտրելը, վատ է։ Մածուն ուտել, ապահովութիւն է։ Մեղր ուտելը՝ հիւանդութիւն է։ Մեռած ազգականին տեսնել, նամակ կստանաս։ Մեռելի հետ խօսելը, մահու ապառնալիք է։



Միս ուտելը, հիւանդութիւն է։ Մուկ տեսնելը կռիւ է։ Մերկ լինելը, զրկանք է։ Մոլլա տեսնելը, վատ է։ Միխակը, լաւ է։ Մոխիրը, նեղութիւն է։

Յ.

Յոպոպը, վատ է։ Յոպոպը տանիքի վրայ, մահուան գոյժ է։

Ն.

Նամակ գրելը, բարի լուրի կսպասես։ Նապաստակ տեսնել, վախկոտ թշնամի է։ Նաւ տեսնելը, օտարութիւն կգնաս։ Նիզակը վրէժխնդրութիւն է։ Նուռ, պանծ և հարստութիւն է։

Շ.

կ Շամամը, բարեբաղդ վիճակ ունենաս։ Շագանակ ուտել, նե-

ղութիւն է։ Շան հաչելը, յանդիմանութիւն է։ Շահը տեսնելը, մեծ բարիք է։ Շաքար ուտելը, նեղսրտութիւն է։ Շապիկ հագնելը նեղութիւն է։ Շիպը վատ է։ Շուրջառ ծածկելը, առողջութիւն է։

Ո.

Ոսկին, շահ ու վաստակ է։ Ոսպ քաղելը, հոգսերից կազատուես։ Ուլ տեսնելը. բարեյաջող գիպուած է։ Ուղտը, թշնամի է։ Ոչխարը սպիտակ, լաւ է, սեւ վատ է։ Ուխտ գնալը՝ մուրազ է։ Ուրագ ձեռքում, գործի յաջողութիւն է

Չ.

Չամիչ ուտելը, վատ է։ Չարուխ հագնելը, ճանապարհորդու-



թեան նշան է։ Չայիր-չիման, ուրախութիւն է։ Չուխայ հագնելը, բաղդաւորութեան նշան է։ Չորթանը, հիւանդութիւն է։ Չէչոտ մարդ տեսնելը, գործերի ձախորդութիւն է. Չայ խմելը փորձաննից կազատուես։

Պ.

Պաս ուտելը, անյաջողութիւն է։ Պանիր ուտելը, նեղութիւն է։ Պալին տեսնելը, պատուի նշան է։ Պապի հետ խօսելը, օրհնութիւն է։ Պառաւ տեսնել, նեղութիւն է։ Պատ քանդելը, ընտանիքին փորձանք գայ։ Պղպեղը, կսկիծ է։ Պասկւելը, լաւ է։

Ջ.

Ջաղաց շինելը, մեծութիւն է.

Ձհուգ տեսնելը, անյաջողութիւն է։ Ջուր խմելը, լաւ է։ Ջրում լողանալը, թեթեւութիւն է։ Ձորի տեսնելը, վատ է։

Ռ.

Ռեհան քաղելը, որդի կունենաս։ Ռաճիկ ստանալը, լաւ է։ Ռուս տեսնելը, թարսութիւն է։ Ռօմ խմելը, կսկիծ է։

Ս.

Սապոնը, կսկիծ է։ Սապոն գործածելը, մահու կսկիծ է։ Սար բարձրանալը, լաւ է։ Սանդուխը մեծութիւն է։ Սագ տեսնելը, լաւ է, միսն ուտելը, հիւանդութիւն է։ Սազ ածելը, վիշտ է։ Սիւն, յոյս է։ Սխտոր կսկիծ է, Սուրբ տեսնելը, յաջողութիւն է։ Սև



հագնելը, վատ է։ Սայլին նստելը՝ նեղութիւն է. Սիրամարգ տեսնելը, լաւ է։ Սոխը, վատ է։

Վ.

Վարդ քաղելը, կամուսնանաս, Վարդ փնջել, կհարստանաս, Վիշապը, մեծութիւն է, կամ փառս։ Վերմակը, հարուստ կին է, Վարդապետ տեսնելը, լաւ է։ Վագր տեսնել, արիւնահեղութիւն է։ Վազ տնկել, յաջողութիւն է.

Տ.

Տախտը, մեծութիւն է, Տուն շինելը, շատ լաւ է։ Տաճիկ տեսնել, լաւ չէ։ Տան փուլ գալը՝ փորձանք է։ Տէրտէր զգեստաւորուած, բարիք կստանաս։ Տուղտ տեսնել, ամաչկոտ կին կունենաս։

Տիկ, տրտմութիւն է։ Տառեխ, ժտատատանջութիւն է։ Տանձ ուտելը, հիւանդութիւն է։ Տիրուհու հետ խօսելը, շատ լաւ է։

Ց.

Ցիցը, չար լեզու է։ Ցախաւելը, բարի նշան է։ Ցորենը խառվութիւն է։ Ցեխը, տրտմութիւն է։ Ցանք անել, ապահով վիճակ է։

Փ.

Փեթակ, լաւ ապագայ է։ Փայտ կտրել, բարի է։ Փոխինդ ուտել, և լաւ է, և վատ, Փողի ձայն լըսելը, ուրախութիւն է։ Փող, վատ է, կտրել՝ թշնամիների կորուստ է։ Փող գտնելը, յաջողութիւն է։

Ք.

Քաղաք տեսնել, լաւ է։ Քաչալ տեսնել, անյաջողութիւն է։ Քար



ժողովել, քեզ կբանբասեն, Քացախը, դառն խօսքեր կլսես։ Քառ մարդ տեսնել, ձախորդութիւն է։ Քիւրդ տեսնելը, լաւ չէ։

Օ.

Օժիտ ստանալ, լաւ է։ Օծուել անուշահոտ իւղերով. յաջողութիւն կը գտնես և անունդ կտարածուի։ Օձ տեսնել վատ է, զգուշ կաց թշնամիներից։ Օղի խմելը, վատ է, ըստ ոմանց, ուրախութիւն է։ Օդի մէջ թռչել, լաւ է։

## ԱՌԱԾՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

—Ով իր աղջկերանց աչքաթող է անում մի անգամ, նա կզղջայ ամեն անգամ:

—Կանայք երբէք չեն ասում այն, ինչի մասին մտածում են և չեն մտածում այն ինչ որ ասում են:

—Որտեղ կանայք շատ են, այնտեղ միշտ անկարգութիւնն էլ շատ է:

—Առանց մօր մնացած օրինակին, աղջիկը ինքնաբերաբար մի աթոռ իսկ տեղից չի կարող շարժիլ:

—Եթէ կամենում ես հաշտ ապրել հարևանիդ հետ կնոջդ լեզուն կտրիր:

—Լաւ է մենակ ապրել դժոխքում, քան չար կնոջ հետ դրախտում:

Հ.

## ՌԱՂԴԱԴՈՒՇԱՆ

| | |
|---|---|
| ԽՈՅՆ | ՁՈՒԿ |
| ՋՐՀՈՍ | ԱՅԾԵՂՋԻՒՐ |
| ԱՂԵՂՆԱՒՈՐ | ԿԱՐԻՃ |
| ԿՇԻՌ | ԿՈՅՍՆ |
| ԱՌԻՒԾ | ԽԵՑԳԵՏԻՆ |
| ԵՐԿԱՒՈՐ | ՑՈՒԼՆ |

## ԽՈՅՆ

Ո՛վ մարդ, ինչպես արևի լոյսը կեանք և կենդանութիւն է տալիս աշխարհին, այնպէս էլ, յաջողութիւնդ, ուրախութիւն և բաղդաւորութիւն կբերի քեզ։ Ինչի մասին, որ մտածում ես, կատարիր, միայն զգուշ կաց չշեղւիս արդարութեան ճանապարհից, և երբէք չմեծամտիս, որովհետև անբարտաւանութիւնը հակառակ է Աստուծոյ։ Քո բաղդաւորութեան յարատևութիւնը, կախւած է քո խոնարհամտութիւնից։

## ԶՈՒԿ

Ո՛վ մարդ՝ քո դժւարութիւնն անցաւ։ Երևում է, որ պիտի ուրախանաս, որովհետև այժմ քեզ բարին է մօտենում. ինչ որ մըտքումդ դրել ես սկսիր, յաջողութիւն կտեսնես։ Քո հակառա-



կորդներդ կտկարանան, աշխատիր քո արդարամտութեամբդ ի դերև հանել նրանց բամբասանքները։ Բարեկամներդ կեղծ են և քեզ սրտանց նախանձող։ Բայց դու նպատակիդ կհասնես։

## ՋՐՀՈՍ

Ո՛վ մարդ՝ բաղդաւոր էիր, բայց մերձաւորներիդ հետ ունեցած գժտութիւնը քեզ զզւեցրեց և դու պանդխտացար։ Այժմ թէև արտաքուստ երևում ես անհոգ, բայց ներքուստ տանջւում ես, զուրկ ամեն տեսակ մխիթարութիւնից։ Խօսք մեր մէջ, դու արժանի էլ ես այդ վիճակին, որովհետև սրտումդ օձեր են պար գալիս, չափից դուրս նախանձոտ ես. ուզում ես հնձել այն տեղից, ուր երբէք չես ցանել, Փախչում ես արդար միջոցներից, և միշտ

անարդար միջոցների ես դիմում. դարձիր դէպի արդարութիւն, և դու նորից բաղդաւոր կլինես։

## ԱՅԾԵՂՋԻՒՐ

Ո՛վ մարդ՝ միայն Աստուած կարող է քեզ օգնել, քո բանդ փըլթրուկ է, դու դեռ շատ վշտեր կըկրես, շատ դժբաղդ օրեր կտեսնես, մեծ տրտմութիւն կգայ քեզ սիրելիներիցդ, կհիւանդանաս, բայց շուտով կառողջանաս. կաղքատանաս բայց յոյսդ Աստուծոյ և բազուկներիդ վրայ որ դնես, նորից դրութիւնդ կբարւոքւի և շատերը քեզ կը նախանձեն. յամենայն դէպս մի տրտմիր, որովհետև վերջդ բարի է, թող Աստուած քեզ համբերութիւն տայ։

## ԱՂԵՂՆԱՒՈՐ

Ո՛վ մարդ՝ քո խորհուրդը բարին կատարեցաւ, որն ինչ որ



կամենում ես, դու կուրախանաս քո յաջողութեամբ, թէ հիւանդ ունիս կառողջանայ, թէ նեղութեան մէջ ես կազատուես, թէ աղքատ ես կհարստանաս, թէ աղջիկ ես կբաղդաւորուիս գեղեցիկ և հարուստ փեսայի գնալով, թէ ծնող ես քո որդոց փառքով կփառաւորուես, միայն բարի սիրտ ունեցիր. ինչ որ քեզ ես ուզում, ցանկացիր և ուրիշին, և մի փոքր համբերութիւն ունեցիր, մինչև քո խնդրուածքդ կատարուի, երանի քեզ։

## Կ Ա Ր Ի Ճ

Ո՛վ մարդ՝ զգուշացիր, որովհետև մէկ կայ, որ արտաքուստ քեզ բարեկամ է, բայց միշտ աշխատում է կարիճի նման խայթել քեզ, իբրև բարի խորհրդատու՝ միշտ դէպի չարն է առաջնորդում քեզ, նրա աչքերը կապոյտ են, մազե-

րը սև, գույնը փոփոխական. այդ տեսակ մարդը ոչ ոքի բարիք չի կամենայ, այլ ուրիշի անկման մէջն է որոնում իր ապահովութիւնը։ Թող այն միտքը, որ նա է յղացրել քո մէջ, և եթէ քիչ համբերութիւն ունենաս, ինչ որ կամենաս կկատարուի։

## Կ Շ Ի Ռ

Ո՛վ մարդ՝ աւետիք տամ քեզ, որովհետև ինչ որ խորհել ես այնպէս էլ կկատարուի և դու շատ կուրախանաս։ Քո սիրտդ բարի լինելով, ուրիշներին միշտ բարի կամեցար, այդ պատճառով, քո ցանկացածի պէս կվարձատրուիս, բայց զգուշացնում եմ քեզ, որ խորհուրդդ ամեն մարդու մի յայտնիր. զգուշ կաց նաև կեղծաւորներից, որոնց բարեկամութիւնը ոչ ոքի վնասից զատ օ-



գուտ չի տուել, աւելի լաւ է անկեղծ թշնամի ունենալ քան կեղծաւոր բարեկամ, այնուամենայնիւ ապահով եղիր, որ քո դէմ որոգայթ լարող՝ ինքը մէջ պիտի ընկնի։ Ինչ գործ որ սկսես՝ յաջողութիւն կգտնես, ինչի որ ձգտես կը հասնես, ինչ ցանկանաս կը կատարուի...Բաղդաւոր մարդ ես .. երանի՜ քեզ։

## Կ Ո Յ Ս Ն

Ո՛վ մարդ՝ թէև դրութիւնդ բաւական դժուար է, բայց մի յուսահատուիր, ինչպէս դաժան ձմռան յաջորդում է բեղմնաւոր գարուն, այնպէս էլ, քո ներկայ տխրութեանդ կյաջորդեն, ուրախ օրեր, և դու եթէ ուրիշների համար նախանձելի էլ չը լինիս, այնու ամենայնիւ գոհ կմնաս քո դրութիւնից, այնպէս որ ապա-

գադ աւելի լաւ կլինի քո անցեալից. հիւանդդ կառողջանայ, հեռաւորդ կվերադառնայ: Հաւանական է, որ մի փոքրիկ էլ ժառանգութիւն ստանաս, միայն զգուշ կաց, որ տուն վերադառնալիս ձեռքիցդ չխլեն: Ամեն բանի հետ կը հաշտուես, բացի ամուսնուդ անհաւատարմութեան, որ քո միակ մտատանջութիւնդ կլինի:

## Ա Ռ Ի Ւ Ծ

Ո՛վ մարդ՝ ինչպէս երևում է քո սրտի ցանկութիւնը կը կատարուի, և դու կուրախանաս, քո ուրախութիւնը կրկնակի կլինի, մանաւանդ՝ որ մի ուրախաւէտ և շահաբեր լուր պիտի լսես, բայց դու պարտաւոր ես պատրաստ լինել, քո առաջդ մի անխուսափելի կռիւ կայ, որից եթէ յաղ-



թող դուրս գաս, բաղդաւոր կլինես, քո ոյժերից է կախուած յաղթանակդ, իսկ յախթանակիցդ կախուած է բաղդ. դժւար է հմ...

## ԽԵՑԳԵՏԻՆ

Ո՛վ մարդ՝ զգուշացնում եմ քեզ. թող այդ մտքերը, զուր տեղ ուրիշների ձեռին խաղալիք մի լինիր, կխայտառակուես, նըպատակիդ չես հասնիր, աւելի լաւ է, որ վերմակիդ չափով ոտներդ մեկնես: Ողորմելի՛, քո այդ խորհրդատուներդ, որ քեզ հետ ուտում խմում և խրախուսում են. Նրանք իրենց շահն ունին, այդ պատճառով՝ քեզ գործիք դարձրած մէջ են գցեր. բայց դու՝ յիմարաբար հաւատում ես նրանց քեզ տուած զովասանքին, և փքըքւում ապուշ հնդկահաւի նման, որից ոչնչով չես զանազանւում:

Ծիծաղելի ես ամեն կողմով, աւելի ծիծաղելի. մեծ ու դատարկ գլխովդ, որ մի չորացած դդումի կնմանի:

## ԵՐԿԱՒՈՐՆ

Ո՛վ մարդ՝ քո աղօթքդ ընդունելի եղաւ. ուստի ինչ որ խորհել մտածել ես, կկատարուի. խորհուրդ բարի է, դու հարամ արել չես կարող, այդ պատճառով մի կասկածիր, յաջողութիւն կունենաս և կբաղդաւորուես: Որպէս վարձատրութիւն քո արդարասիրութեան՝ գանձ կգտնես, կը հարստանաս, բայց մի առ ժամանակ յետոյ կէսը կկորցնես մի վշտանար, մնացածն էլ քեզ բաւական է մինչև խորին ծերութեան, որին դու պիտի հասնես. թէ և ամուսինդ շուտ կկորցնես բայց մէկի փոխարէն երկու որդի



կունենաս հաւատարապէս սիրելի, որոնք մինչև խոր ծերութիւն քեզ կմխիթարեն: Նախանձելի է կեանքդ թէ այս աշխարհում և թէ հանդերձեալում:

## Ց Ո Ւ Լ Ն

Ո՛վ մարդ՝ կարելի է քո բաղդդ երկու խօսքով ասել, բայց սիրտդ չկոտրելու համար ասեմ, որ դու ես այդքան մտածում, գլուխ չի ագայ. իսկ եթէ մի քիչ արդարա էր և համեստ լինես, կարելի է բաղդդ նորից քեզ դառնայ. այնուամենայնիւ ներկայ մտածմունքդ անիրագործելի է, և դու վնասից զատ ոչ մի օգուտ չես ունենար նրան անձնատուր լինելով: Զգուշացի՛ր ամենամօտ ընկերիցդ, որ քո ամենամեծ թշնամիդ է. որից աւելի մեծ վնաս կունենաս:

# ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ

1. Հեւոցի կամ շնչարգելութեան դեղը.—*Դեղին կոճը փոշիացրու թէյ շինիր և շաքարով խմացրու։*

2. Փորահարինքի դեղը։—*Բրինձը կարմիր կովի կաթով եփէ և ուտէ կլաւանայ։*

3. Հազի եւ մաղձի դեղը.—*Ամեն առաւօտ մի նոր ձուի դեղնուծք լից մի բաժակի մէջ, վրան լից մի մսխալ փոշիացրած սառը շաքար, այլ և երկու կգալ անիւղ մսի ջուր, խառնիր և խմէ, կուրծքը կկազի, մաղձը կքանդուի, և հազը կհանդարտի։*

4. Գաղտնի ջերմ ունեցողներին—*Ծեծած սխտորը մածնի հետ խառնելով, գիշերը կապում են հիւանդի ոտներին, որ տաքութիւնը քաշում է։*



*5, Եթէ կանայք չեն ցանկանում որ իրենց կաթ կտրուի, անանուխ (պիտնայ) և սխտոր չպիտի ուտեն։*

*6. Ցանկարծակի բռնած սանջուն կտրելու ամենալաւ միջոց. տաք կոճը (զանջաֆիլ) ծեծիր և խառնիր մի բաժակ արաղի հետ ու խմիր, ցաւն իսկոյն կանցնի։*

7. Մայասուլի դեղը.—*Ուղտի թրիք տաք-տաք դիր վրան և կապիր, շատ է օգնում։*

8. Բերանից արիւն թափելու դեղը.—*Հում ձուի վրայ շիպ ցանէ և խմէ, կամ այծի պլոճիկի ճրագուն կաթի հետ խփէ և խմէ. արիւնը կկտրի և կառողջանայ։*

9. Փորացաւի կամ փորահաւութեան դէմ հեշտ միջոց.—*Դաղձ, (վայրենի պիտնայ), թէյ շինիր և խմիր։*

10. Գլխացաւի դեղը—*Դառա-*

ւած պատը ծեծիր, ջուրը քամիր, այդ ջրի հետ միաչափ խառնիր շիր և հինայ, մի ոչխարի լեղիով շաղախիր ու դիր ցաւող գըլխին և թող մնայ 24 ժամ, գլխացաւ կանցնի։

11. Փայծեղի (տալաղի) դէմ. մէկ ձուի դեղնուց լաւ հարէ, յետոյ մի սեղանի գդալ քացախով բաց արա և խմիր. այդ գործողութիւնը կրկնիր մի ամիս շարունակ։

12. Կապոյտ հազի դեղը.—Կապոյտ հողով բռնուած երեխաների տաք կրունկներին՝ գիշերները ծեծած սխտոր են քսում, որն շատ է օգնում,

13. Քարի դեղը.—երեք պճեղ սխտոր կտաւատի ձէթով եփացրու, դիր թող սառի, և ապա սա-



ռած ձէթը քսիր՝ քար եկած տեղ կլաւանայ։

14. Դեղնութիւն բժշկելու միջոց.—Զորացրած ծիրանը ջրալի եփիր (խոշապ) և մի քանի օր առաւօտներ շարունակ կեր և ջուրը խմէ. դեղնութիւնը կանցնի։

15. Խլացածի դեղը.—Վերցրու մրջիւնի ձուերը, բողկը ծեծիր, ջուրը քամիր, մրջիւնի ձուերը մէջը խառնէ և ապա բամբակով դիր ականջին։ Այլ և նուռը խորովիր տաք-տաք ականջում կաթացրու, կամ մեղր և լեղին իրար խառնէ և ապա կաթացրու ականջում։

16. Ականջացաւի դեղը. — Ծիրանի դառն կորիզը ծեծիր և մեղրով ականջը կաթեցրու։ Ականջը՝ որ վատ խառուկ ցաւ ունենայ, հին ձիթամանի մէջ, երեք բաժինը եռացած ջուր լից և ականջը պինդ բռնիր վրան, Գո-

լորշիկներս մտնելով ցաւը կկտրի։

17. Բերանի վատ հոտ ունեցողներին.—Դառն աւելուկի արմատը՝ թէժ քացախում եփէ, հովանալուց յետոյ մի քանի օր այս հեղուկից տուր թող բերանները ողողեն և փոքր ինչ բերաններումը պահեն և ապա թափեն։ Այս միջոց մի քանի անգամ կրկնելով հոտը բոլորովին կկտրուի։

18. Մայասուլի դեղը. — Ութտաս հատ հունի կորիզ լաւ բովէ, փոշիացրու և մեղրի հետ խառնէ ու կեր, 10 օր շարունակ, մայասուլը կառողջանայ։

19. Քար ունեցողներին.—Կովի արիւնը խմացրու, կամ կնոջ կաթը մեղրով խմացրում։

20. Քրտնքի հոտի դեմ.—Այրած շիպը փոշիացնել և ցանել ոտքի քրտնած տեղը, հոտը շուտով կոչնչանայ։



21. Ծննդական կինը եթէ մրսի, և փորը սկսէ ծակոցներով ցաւել, դդումը փուռի կամ թոնրի մէջ լաւ խորովիր և սերմեր հանելուց յետոյ անհալ մեղրի հետ շաղախիր այնքան, որ մահլամի նման դառնայ. ապա առ մաքուր կտաւի վրայ, բաց արա, և ամբողջ փորը իգական անդամովը փաթթիր. Թող վրան մնայ երկու կամ երեք ժամ, այդ գործողութիւնը կրկնիր օր երեք անգամ. այդ միջոցին հիւանդին պէտք է ուտեցնել անհալ մեղր, որով ծակոցն էլ կկտրի, և բոլոր ապականութիւնն էլ կը մաքրուի։

22. Քաչալի դեղը.—Տօրոնը փոշիացրու՝ մեղրի հետ խառնիր, և դրի գլխի վէրքերի վրայ, կլաւանայ։

—

### Գ Ի Ս Ր Ժ Ա Լ Ի Ք

Երկու հասունացած օրիորդ քոյրեր այցելելով իրենց մօտաւոր ազգականուհիներից մէկին, որ նոր էր դուրս եկել առաջին ծնըն-դաբերութիւնից, հետաքրքրութեամբ հարցրին.

—Հոփիսօ, երեխայ բերել ձնց ա. հօ դժւար չի։

—Ամա՜ն, Եղսան ջա՜ն,—պատասխանեց Հոփիսօն, ես տեսայ դուք ո՛չ տեսնէք։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀԱՍԽ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ им. А. Мясникяна



**ԳԻՆԸ 20 ԿՈՊ.**

Դիմել Թիֆլիսի բոլոր հայ գրավաճառներին։ Գումարով գնողներին զգալի զեղչ։ Իմ հասցէս Թիֆլիս Հաւլաբար. Ռօզովայեա պլօշչատ. № 5. Խ. Տէր-Յովհաննիսեան, օտար տեղերից՝ Тифлисъ Розовая площадь № 5

Х. Теръ-

059
Z-95

6718

2013

<< Ազգային գրադարան

NL0032287